

«ՍՈԼԵՅ» ՄՊԸ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԴԱՇՏԱԴԵՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԱԽԴՆԵՐ
ԴԱՇՏԱՄԻԶՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ՀՈՂԱՄԱՍ
ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ
ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

լրամշակված



«Սոլեյ» ՍՊԸ տնօրեն

Գագիկ Սողոմոնյան



Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկություն	4
2. Հավելվածներ	4
3. Օգտագործվող հապավումները	4
4. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը	5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ	8
6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը	9
7. Նախատեսվող գործունեության վայրը, իրականացման նպատակը	9
8. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը	10
8.1 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը	10
8.2. Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը	18
8.2.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ	18
8.2.2 Մեյամիկա և երկրաբանություն	19
8.2.3 Կլիմա և օդային ավազան	19
8.2.4 Հողային ռեսուրսներ	24
8.2.5 Ջրային ռեսուրսներ	26
8.2.6 Կենսաբազմազանություն	27
8.2.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ	30
8.2.8 Պատմամշակութային հուշարձաններ	31
8.2.9 Բնության հուշարձաններ	36
8.2.10 Սոցիալ-տնտեսական	38
9. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման, փակման փուլեր)	41
9.1 Շահագործման փուլ	42
9.2 Շինարարության փուլ	45
9.3 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը	48
9.4 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր	49
10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)	51
10.1 Օդային ավազան	52
10.2 Ջրային ռեսուրսներ	53
10.3 Հողային ռեսուրսներ	53
10.4 Կենսաբազմազանություն	55
10.5 Թափոններ	55
10.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	57
10.7 Էկոլոգիապես զգայուն տարածքներ	58
10.8 Արտակարգ իրավիճակներ	58

10.9. Աղմուկ և թրթռում.....	59
10.10. Էլեկտրական և մագնիսական դաշտ:.....	60
10.11. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.....	60
10.11. Սոցիալական ազդեցություն.....	61
10.12. Լանդշաֆտ. Բարեկարգում.....	62
11. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան).....	63
11.1. Օդային ավազան.....	63
11.2 Հողային ռեսուրսներ.....	64
11.3 Ջրային ռեսուրսներ.....	65
11.4. Կենսաբազմազանություն.....	66
11.5. Թափոններ.....	66
11.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	68
11.7. Աղմուկ և թրթռում.....	69
11.8. Արտակարգ իրավիճակներ.....	69
11.9. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. Շինարարության փուլ:.....	70
11.10. Սոցիալական գործոններ	72
11.11 Բարեկարգում և Լանդշաֆտ.....	72
12. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը.....	73
(Մոնիթորինգ).....	73
13.Բնապահպանական կառավարման պլան.....	75
14. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր)	94
15. Հանրային քննարկումներ.....	98
16.Բողոքների ընթացակարգ	98
17.Նախատեսվող գործունեության իրականացման նպատակահարմարությունը, հաստատված հիմնադրությային փաստաթղթերին նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.....	99
18. Փակման և հետփակման փուլեր.....	100
Գրականություն.....	102

1. Ընդհանուր տեղեկություն

Հաշվետվություն	Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Սաիդներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամաս հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում:
Ձեռնարկող	«ՍՈԼԵՅ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Երևան: Արաբկիր 0028 Կիևյան փ./Շ/18/51
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն	Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Սաիդներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամաս:
Նախագծող	«ՇԱՐՈՍՈԼԱՐ» ՍՊԸ
Հաշվետվության նախագծող	«Նովալ» ՍՊԸ
Հաշվետվություն մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 Noval LLC noval.llc.noval@gmail.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների Պետական գրանցման վկայականը, պետական ռեգիստրը :

Հավելված 2. Թալին համայնքի կողմից տրված նախագծման թույլտվությունը :

Հավելված 3. Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիան :

Հավելված 4. «ՀԷՅ» ՓԲԸ-ի տեխնիկական պայմանը:

Հավելված 5. Արևակայանի, ենթակայանի հատակագծերը ՕԳ-ի, WGS կոորդինատներով:

Հավելված 6. Մշակույթի կարծիքը:

Հավելված 7. Համայնքի ավագանու որոշումը:

Հավելված 8. Թերթի հայտարարությունը, Հանրային քննարկման արձանագրություններ, մասնակիցների ցանկ, լուսանկարներ:

Հավելված 9. Համայնքի տեղեկանքը աղբահանության վերաբերյալ:

Հավելված 10. Մթնոլորտային օդի հաշվարկները:

Հավելված 11. Վճարման անդորրագիրը:

3. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատում

ՕԳ՝ օդային գիծ

ՀԷՑ՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր

Վտ՝ Վատտ

ՖՎ՝ ֆոտովոլտային

ՍՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

կՎտ՝ կիլովատտ

4. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3)

Օրենք: Օրենքը կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք («Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության)

բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպաիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային

Ֆոնդում առկա բոլոր հոդամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)– Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք / Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին/ Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ **ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ.** «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ.** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ.** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թ.** «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում :
- ❖ **ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ.** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 08 նոյեմբերի 2011թ.** «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» N1396 որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ.** «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 18 մայիսի 2000 թվականի 1000 Վոլտ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնները** հաստատելու մասին N 249 որոշում:

5.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ

2023 թվականի մայիսի 3-ին ընդունվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները) Օրենքը: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի էներգետիկայի բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «արևային էլեկտրակայաններ՝ 3 հա և ավելի տարածք զբաղեցնող»: Նախատեսվող արևային ֆոտովոլտային կայանը զբաղեցնում է 7,4 հա տարածք:

«ՍՈԼԵՅ» ՍՊԸ» ընկերությանը պատկանող արևային կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվել է համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի: Սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա

հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

Գնահատման հաշվետվությունը կազմվել է համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի Բ կատեգորիայի ներկայացվող պահանջներին համապատասխան:

6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման համար հիմք է հանդիսացել.

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականը՝ N 23052023-02-0013
- Գործունեության իրականացման Լիցենզիան:
- «ՀԷՅ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանը:
- Գործունեության իրականացման նախագծային փաստաթղթերը:

7. Նախատեսվող գործունեության վայրը, իրականացման նպատակը.

«ՍՈԼԵՅ» ՍՊ ընկերության Արևակայանը տեղակայվելու է Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի վարչական տարածքում՝ Դաշտադեմ Սահղներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամաս հասցեում: Թիվ 2 հողամասի տարածքը կազմում է 7,4 հա՝ սեփականության իրավունքով :

Նախատեսվող գործունեության նպատակը: Նախատեսվող «ՍՈԼԵՅ» ՍՊԸ-ի արևային կայանի կառուցման նպատակը ֆոտովոլտային կայանի կառուցումն է՝ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով: Արևային էներգիան արևի լույսի վերածումն է էլեկտրաէներգիայի՝ ուղղակիորեն օգտագործելով կա՛մ ֆոտովոլտաիկա (PV), կա՛մ անուղղակիորեն օգտագործելով կենտրոնացված արեգակնային էներգիա (CSP): Սրանցից վերջիններն օգտագործում են ոսպնյակներ կամ հայելիներ ու հետևման համակարգեր՝ արևի լույսի մեծ չափաբաժինը փոքր ճառագայթում կենտրոնացնելու համար: Ֆոտովոլտիկան լույսը վերածում է էլեկտրական հոսանքի՝ օգտագործելով ֆոտոէֆեկտը: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024թ.սեպտեմբերի 25-ի, N°318-Ա որոշման համաձայն՝ «ՍՈԼԵՅ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է ԼԷ N°0793 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2046թ. սեպտեմբերի 26-ը գործողության ժամկետով: Ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառքն իրականացնել երկարաժամկետ ժամանակահատվածում: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է,

ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:

8. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը.


8.1 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը.

Արևակայանը տեղակայված է լինելու «ՍՈԼԵՅ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում՝ Արագածոտնի մարզի Թալին համայնքի, Դաշտադեմ բնակավայրի վարչական տարածքում՝ Դաշտադեմ Սահղներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամաս հասցեում: Նախաձեռնողի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Արաբկիր 0028, Կիևյան փ./Շ./18/, բն. 51

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի: Արևային կայանի տեղաբաշխման վայրն ընտրված է տեղական ինքնակառավարման մարմինների և հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ՝ հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում առկա ենթակառուցվածքները: Տարածքին կից մոտ 8մ հեռավորության վրա առկա է համայնքային չգործող ռոտոման ջրագիծ:



Տարածքը նախկինում ծառայել է որպես արոտավայր, տարածքում առկա չէ որևէ շինություն, ծառ, թուփ: Տեղ-տեղ, հազվադեպ առկա է ոչ լավ զարգացած տարախոտային բուսականություն, հիմնականում քարային կուտակումներ են:



Կատարվել են տարածքի ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ՝ «ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ կողմից, նախատեսվող գործունեության տարածքի երկրաբանական տվյալների հավաքագրման և համապատասխան հաշվետվության կազմման նպատակով: Ուսումնասիրվող տարածքի տեղագնությունը կատարվել է 2025 օգոստոս ամսին և ուսումնասիրվել են գոյություն ունեցող փոտրակները, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Տվյալ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղամասով գրունտների պարզաբանման համար փորվել են 4 հատ, ընդհանուր 5,5 գծամետր խորությամբ հետախուզահորեր համաձայն ըստ ՇՆՁ I-2.101-2002 (ձեռնարկ ՀՀՇՆ I-2.01-99 նորմերի):



Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որին բնորոշ է լավաներով ծածկված՝ սարավանդներով և ձորակներով կտրտված լանդշաֆտը: Շրջանը գտնվում է Արագածի հրաբխային զանգվածի հարավ-արևմտյան ստորոտին, Թալինի սարավանդի սահմաններում: Ունի թույլ բլրաալիքավոր ռելիեֆ, թույլ մասնատված մակերևույթ: Մակերևութային գերակշռող թեքությունը կազմում է 5-15°: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1494,0-1509,0 մետրերի սահմաններում:

Շրջանի երկրաբանական պայմանները Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը հրաբխային Արագած լեռան գործունեությունն է: Հրաբխային համալիրները ներկայացված են չորրորդական հասակի բազալտներով, տուֆերով և տուֆոլավաներով: Մեր հետազննվող տարածքում առկա են հողաբուսական շերտը և տուֆերը, տեղ-տեղ բազալտի բեկորներով: Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,9 մետր:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ, ուստի ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Մեր ուսումնասիրվող տարածքում, նախկինում հորատանցքերի հորատման արդյունքում, գրունտային ջրեր չեն հայտնաբերվել: Դրանք տարբեր տարիներին հետազոտված նյութերի հիման վրա գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի տարածքը գտնվում է I սեյսմիկ գոտում: Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝ 0.3g:

Կլիման Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Թալին համայնքի Դաշտադեմ գյուղում՝ «ՅՈՒՐՏ» գոտում: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է զով և քամոտ ամառը:

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը: Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման, փորված հետախուզահորերի, տեղանքում բնական կտրվածքների, գրունտների ելքերի և արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ հողաբուսական շերտը, կավավազը խճավազի, խճի պարունակությամբ, բազալտի, տուֆի խոշոր բեկորային գրունտները: Տեղամասի երկրաբանական կտրվածքը՝ հետազոտված խորությունների սահմաններում, ներկայացված է գրունտների 3 շերտով:

Շերտ-1 Բուսահող (տարբեր բույսերի արմատներ, խճավազ, կավավազ) Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ 101-ի 8.3) II կարգ է: Բուսահողը առկա է շատ հազվադեպ, տեղ-տեղ, 0,0-0,2մ հզորությամբ:

Շերտ-2 Կավավազ խճի, խճավազի պարունակությամբ: Սպիտակահողեր: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ 101-ի 50% 34.3) II, 50% 5.4) IV կարգ են:



Շերտ-3 Բազալտի, տուֆի խոշոր բեկորներ, բեկորների առանձնացումներ: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ 101-ի 30 % 37.V, 70 % 18.1) VII կարգ են:




Ուսումնասիրվող տեղամասում, որպես հուսալի հիմնատակ առաջարկվում է Շերտ 3-ի գրունտները: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Գրունտներից կատարվել են մի շարք տարրերի քիմիական փորձարկումներ, որոնց տվյալները բերված են ստորև աղյուսակում (էջ32). Համաձայն (ГОСТ 31384-2008). կամ ГОСТ 31384-2017


- Ըստ PH ցուցիչի ագրեսիվ չեն:
- Ըստ բիկարբոնատի՝ ցուցանիշը W4 բետոնի նկատմամբ ագրեսիվ չէ:
- Ըստ սուլֆատի՝ ցուցանիշը W4 բետոնի նկատմամբ ագրեսիվ չէ:
- Ըստ Ca,Mg,K,Na՝ ցուցանիշը W4 բետոնի նկատմամբ ագրեսիվ չէ:



Գլխավոր հորիզոնական ճառագայթումը Հայաստանի Հանրապետությունում



Արևային ֆոտոէլեկտրական կայանը (ԱՖԷԿ) նախատեսվում է կառուցել Թալին համայնքում:



Գործունեության տարածքին ամենամոտը գտնվում է բնության հատուկ պահպանվող տարածքը «Տատիկ» քարե քանդակ երկրաբանական հուշարձանը՝ մոտ 267մ հեռավորության վրա: Գործունեության տարածքի հեռավորությունը միջպետական ճանապարհից կազմում է 799մ, հանրապետական նշանակության ավտոճանապարհից՝ 1230 մ, Դաշտադեմ բնակավայրի ամենամոտ բնակելի տնից՝ 792մ, մոտակա ջրային ռեսուրսներից՝ 637մ և Կարմրաշեն գետից՝ 1417 կմ: Տարածքին մոտ 1767մ հեռավորության վրա գտնվում է գործող այլ արևակայան: Մոտ 200մ հեռավորության վրա գտնվում է արոտավայր:

Հարակից տարածքները համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքներ են, իլեկտրահաղորդման գծեր: Տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները, հնագիտական շերտերը:

Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով: Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են՝ պայմանավորված տարածքի արդեն մարդածին ազդեցության գոտում գտնվելու հանգամանքով՝ օգտագործվել է որպես արոտավայր, բուսածածկը արդեն շատ հազվադեպ է հանդիպում:

8.2.Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը

8.2.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ.

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի Դաշտադեմ բնակավայրի վարչական տարածքում: Արագածոտնի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևմուտքում: Մարզը հյուսիսից սահմանակից է Շիրակի և Լոռու մարզերին, արևելքից՝ Կոտայքի մարզին, հարավում՝ Արմավիրի մարզին և ք. Երևանին, իսկ արևմուտքում պետական սահմանով՝ Թուրքիային: Թալինի տարածաշրջանի մի մասը գտնվում է նախալեռնային գոտում, իսկ մյուս մասը՝ լեռնային գոտում, ծովի մակերևույթից 2000-2500 մետր բարձրության վրա:




Տարածաշրջանի մակերևույթի մեծ մասը կազմված է տարբեր տիպի ու բնույթի երիտասարդ հրաբխային լավաներից: Այստեղ են գտնվում Թալինի, Կարմրաշենի, Ապարանի սարավանդները, որոնց մակերևույթին բնորոշ են խարամային կոները, տուֆային դաշտերը, քարակարկառները: Երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը հրաբխային է, սարահարթը ձևավորվել է Արագած լեռան վերին պալեոգենյան գործունեության հետևանքով լեռան օջախից դուրս եկող ժայթքումից: Հրաբխային համալիրները ներկայացված են անդեզիտա-բազալտներով, դալիտներով, տուֆերով և տուֆոլավաններով, որոնք ծածկված են էրոզիոն գոյացությունների շերտերով: Դրանք հիմնականում կենտրոնական տիպի չորրորդական առաջացումներ են: Ռելիեֆին բնորոշ են հրաբխաերոզիոն ձևերը, մակերևույթի խիստ կտրտվածությունը,

Ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հոդմնահարությունը:

8.2. 2. Սեյսմիկա և երկրաբանություն

Համաձայն Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ 2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի՝ Թալինի համայնքը գտնվում է սեյսմիկ առաջին գոտում, գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են $A=0.3g$:



8.2.3 Կլիմա և օդային աղաղան

Արագածոտնի մարզի և հատկապես նախատեսվող գործունեության տարածքին բնորոշ է չոր ցամաքային կլիման: Կլիման չափավոր ցամաքային է, շոգ ու չորային ամառներով, չափավոր ցուրտ ձմեռներով: Ըստ «Թալին» օթերևութաբանական կայանի տվյալների՝ օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 37.5°C , օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -26.1°C , հարաբերական խոնավությունը՝ 66%, տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 434մմ:

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024թ.«Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները Թալին քաղաքի համար՝ որպես խոշորացված համայնք:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 1

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈԱՆ ՍԿԻՉԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
15. Թալին	-5.7	-4.1	1.0	7.5	12.3	16.7	20.8	21.0	16.7	10.2	3.3	-2.9	8.1	-26.1	37.5

Օդի հարաբերական խոնավությունը

Աղյուսակ 2.

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
15.Թալին	77	75	69	66	66	60	55	52	54	63	73	78	66	77	73	52	44

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
15. Թալին	23	25	37	60	77	51	35	22	20	36	25	23	434	133	301
	21	22	38	36	37	63	58	44	27	36	22	19	63		

Քամի

Աղյուսակ 4.


Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %					ըստ ուղղությունների			Անդրորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Փերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Փերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
19.Թալին	հունվար	29	9	13	27	11	3	3	5	50	1.5	ՀվԱրլ	3.2	ՀվԱրլ	2.9
		2.4	2.2	2.6	2.9	2.1	2.2	2.6	3.6						
	ապրիլ	22	8	13	27	15	4	4	7	33	2.2				
		3.3	2.4	2.6	3.6	2.9	3.5	3.2	4.1						
	հուլիս	31	8	9	25	12	3	3	9	36	2.2				
		3.5	2.6	2.4	3.2	2.4	2.7	2.7	4.1						
	հոկտեմբեր	31	9	10	22	15	3	3	7	42	1.8				
		2.9	2.2	2.4	3.0	2.2	2.8	2.7	3.9						

ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵՎԱԿՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 28 Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
19. Թալին	ժ	92	105	142	157	202	270	318	301	251	176	133	94	2241
	օր	13	10	9	7	5	1	1	1	2	7	8	12	76

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ Թալին համայնքը գտնվում է ծովի

մակարդակից 1600մ բարձրության վրա՝ ցուրտ կլիմայական գոտում: Ամառը՝ զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0- 6.0 մ/վ Ձմեռը՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ:

Օդային ավազան: Հայաստանի հանրապետությունում օդային ավազանի դիտարկումներ են կատարվում շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայաններում:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ համեմատությամբ: Նախատեսվող գործունեության տարածքում օդի որակական ցուցանիշների, մթնոլորտն աղտոտող նյութերի և աղտոտվածության մակարդակի ելակետային տվյալների վերաբերյալ՝ տեղեկատվությունը ներկայացվել է «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից՝ հրապարակված «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (<http://meteomonitoring.am/page/1591>): Ներկայացվում է Թալին և Դաշտադեմ բնակավայրերում օդի որակական ցուցանիշներն ըստ բնակչության թվաքանակի, որպես մինչև 10000 բնակիչ ունեցող բնակավայրեր:

- ✓ Փոշի՝ 0,071 մգ/մ³,
- ✓ ծծմբի երկօքսիդ(SO₂)՝ 0,006 մգ/մ³,
- ✓ ազոտի երկօքսիդ (NO₂)՝ 0.023 մգ/մ³,
- ✓ ածխածնի օքսիդ (CO)՝ 0.8 մգ/մ³:

8.2.4 Հողային ռեսուրսներ

ՀՀ Արագածոտնի մարզը ՀՀ այն մարզերից է, որտեղ հանդիպում են հայտնի բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները (950 մ-ից մինչև 4090 մ բացարձակ բարձրությունները): ՀՀ Արագածոտնի մարզում են գտնվում Հայաստանի Հանրապետության ամենաբարձր գագաթ Արագածը (4090 մ) և Ծաղկասար (2219 մ), Իրինդ (2050 մ), Արտենի (2047 մ) հանգած հրաբուխները: Մարզի ռելիեֆը գրավիչ է ինչպես դաժնակային սպորտի, այնպես էլ լեռնագնացների համար, առկա են տարաբնույթ բարդության ուղիներ, հարմար տարբեր պատրաստվածություն ունեցող անձանց համար: Մարզի տարածքի մեծ մասը զբաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ: Մարզի 19 համայնքներ ունեն լեռնային, իսկ 40 համայնքներ՝ բարձր լեռնային կարգավիճակ:

Համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմերի մշակման ատլասի՝ Արագածոտնի մարզի նախալեռնային հատվածերում հողածածկույթը կազմում են կիսաանապատային գորշ, ինչպես նաև բաց և տիպիկ լեռնային շագանակագույն հողերը: Ըստ մեխանիկական կազմի հիմնականում միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,3-1,33 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,53-2,72 գ/սմ³ սահմաններում: Արագածոտնի մարզի 1400-1500մ բարձրությունների վրա տեղաբաշխված է չոր լեռնատափաստանային հատվածները: Հողածածկույթը կազմում են տիպիկ և մուգ լեռնային շագանակագույն, ինչպես նաև տիպիկ լեռնային սևահողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,22-1,25 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,6-2,63 գ/սմ³ սահմաններում: 1500 մետրից ավելի բարձրությունների վրա՝ բարձր լեռնատափաստանային տարածքներն են: Հողածածկույթը կազմում են կրազերծված լեռնային սևահողերը և սևահողանման լեռնային մարգագետնատափաստանային հողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են:

Տարածաշրջանի մեծ մասը զբաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ: Բարձր լեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ, որոնք հաճախ ընդմիջվում են քարակարկառներով ու լերկ ժայռերով: Որոշ վայրերում հանդիպում են կաղնու ոչ ընդարձակ անտառակներ:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը՝ 4313.0 հա է: Համայնքի արևելյան հատվածի հողածածկույթը խիստ աղքատիկ է: Այս տարածքները ներկայացված են խիստ կտրտված թեք լանջերով, հողերը՝ էրոզացված են:



Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի «Հողի որակին ներկայացվող պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N01-Ն հրամանի Հավելված 3-ի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Կատարվել է գործունեության ենթակա տարածքի հողի նմուշառում և որակական հատկանիշների գնահատում:

Նմուշի տեղեկատվություն		ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, գյուղ Դաշտադեն, Սաիդներ Դաշտամիջյան փողոց 2 հողամասում կառուցվող ՄԿտ հզորությամբ «ՍՈԼԵՅ» արևային ֆոտովոլտային կայանի տեղամաս		
Որոշվող ցուցանիշ		մգ/100գ	մգ-էկվ/100գ	էկվ-%
1	NH ₄ ⁺	0.46	0.026	1.69
2	Na ⁺	12.92	0.56	37.24
3	K ⁺	0.33	0.01	0.56
4	Ca ²⁺	14.4	0.72	47.74
5	Mg ²⁺	2.31	0.19	12.76
6	Fe ²⁺	0.048		
7	Fe ³⁺	0.10		
	Σ		1.51	100
8	Cl ⁻	4.22	0.12	7.88
9	SO ₄ ²⁻	25.34	0.53	35.00
10	HCO ₃ ⁻	41.48	0.68	45.08
11	CO ₃ ²⁻	0.90	0.03	1.99
12	NO ₃ ⁻	9.40	0.15	10.05
13	NO ₂ ⁻	0.12		
	Σ		1.51	100
14	Ընդհ. հանք.	112.03		
15	Չոր մնացորդ, %	0.147		
16	Ընդհ. կոշտ.		0.91	
17	pH 1/5	7.92		
18	Էլ/հաղորդականություն, μS/սմ 1/5	216		
19	Աղակալվ., %	0.075		

8.2.5 Ջրային ռեսուրսներ

Մարզի ջրային պաշարները գոյանում են Արագած լեռան ձնահալոցքից, տեղումներից և բնական աղբյուրներից: Մարզում բազմաթիվ են լավային ծածկույթների տակից բխող սառնորակ աղբյուրները: Ջրային պաշարներից սնվում են Ապարան-Երևան և Ապարան-Սպիտակ ջրատարները: Արագածոտնի մարզում ստորգետնյա ջրերը գտնվում են 120-150մ խորության վրա: Մարզի հիմնական զարկերակը Քասախ գետն է՝ երկարությունը 89 կմ, ավազանի մակերեսը՝ 1480 քառ. կմ, Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով: Մարզի տարածքով են հոսում նաև Հալավար, Գեղաձոր (երկարությունը 34 կմ է, ջրհավաք ավազանը՝ 144 քառ. կմ), Շահվերդ, Ամբերդ և Գեղարոտ գետերը:

Կան շատ հեղեղատարեր (նշանավոր է Մաստարայի հեղեղատարը): Մարզի տարածքով է անցնում Արգնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը:

Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ: Մարզում առկա է 29 արհեստական ջրամբար: Գործում են Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի, Սաբունչիի ջրամբարները: Ամենամեծը Ապարանի ջրամբարն է. մակերեսը 7.0 քառ. կմ է, ընդհանուր ծավալը՝ 91 մլն.մ³, օգտակարը՝ 81 մլն.մ³, ջրթողունակությունը վայրկյանում՝ 18 մ³: Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը: Նշված ծավալի ռոտզման ջրից տարեկան օգտագործվում է մոտ 85 մլն.մ³, առկա քանակության 16%-ի չափով: Մնացած քանակությունը կորչում է գոլորշիացման տեսքով կամ դուրս է գալիս մարզի տարածքից:

Թալինի ջրանցք: Ջրանցքը գտնվում է Հայաստանի Արագածոտնի և Արմավիրի մարզերում: Սկիզբ է առնում Ախուրյանի ձախ ափից: Սնվում է Ախուրյան ջրամբարի ամբարտակված ջրերից: Առաջին հերթը շահագործման է հանձնվել 1957թ., երկրորդը՝ 1974թ., երրորդը՝ 1986թ.: Մայր ջրանցքի երկարությունը 91 կմ է, բաժանարար ցանցինը՝ 118 կմ: Մայր ջրանցքը բաժանվում է աջ և ձախ ճյուղերի: Ջրթողունակությունը 30 մ³/վ է: Ոռոգում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի մոտ 24 հազար հեկտար հողատարածք: Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքեր չկան: Արևային կայանի շինարարական և հետագա շահագործման փուլերում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածությունը փոփոխության չի ենթարկվելու:


Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ դիտացանցերի միջոցով: Մակերևութային ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման:



Նախատեսվող գործունեության տարածքում ջրային ռեսուրսներ չկան, մոտակա ջրային ռեսուրսը գտնվում է՝ 637մ հեռավորության վրա:

Հայաստանը գտնվում է Կովկասի էկոտարածաշրջանում: Այն բարձր լեռնային երկիր է, որտեղ առանձնացվում են 5 հիմնական լանդշաֆտային տիպեր՝ կիսաանապատային, տափաստանային, անտառային, ենթալպյան և ալպյան մարգագետնային:

Հոդերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:



Բուսական աշխարհ: Տարածաշրջանին բնորոշ է կիսաանապատային և տափաստանային բուսածածկույթը: Տարածքի բուսականությունը ներկայացված է հիմնականում կիսաանապատային օշինդրա-էֆեմերային և տափաստանային մոլախոտային բուսականությամբ:

Տարածաշրջանում աճում է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Արագածոտնի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

Թալինի տարածաշրջանում առկա են Կարմիր գրքյան հետևյալ տեսակները՝ Խլոպուզ Գրոյտերի *Merendera greuteri* Gabrielian, Կատեգորիա՝ CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v), կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, Տուղտավարդ Սոփիայի *Alcea sophiae* Iljin՝ EN B 1 ab(iii) + 2 ab(iii), վտանգված տեսակ:



Խլոպուզ Գրոյտերի



Տուլտավարդ Սոֆիայի

Նախատեսվող գործունեության տարածաշրջանը ենթարկված է անտրոպոգեն ազդեցության, բուսականությունը գրեթե բացակայում է: Գործունեության տարածքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գնացված բուսատեսակներ կամ դրանց աճելավայրեր չկան:

Կենդանական աշխարհ: Արագածոտնի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, կզաքիս, գորշուկ, նապաստակ և այլն: Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր:

Սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իծը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ /*Pyrrhocorax graculus*/, կովկասյան մայրեհավ (*Tetrao mlokosiewiczi*), տափաստանային արծիվ (*Aquila nipalensis*), և այլն:

Տարածաշրջանում կան մի շարք կենդանատեսակներ, որոնք բավականաչափ հանդուրժող են մարդկային միջամտության նկատմամբ, և մնում են տեղում (օրինակ՝ նապաստակը, ոզնին և այլն): Բացի այդ, որոշ տեսակներ կարող են բավականաչափ հարմարվողական կենսակերպ վարել նոր պայմանների նկատմամբ (օրինակ՝ աղվեսը կամ որոշ թռչնատեսակներ):

Սողունների և երկկենցաղների վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ստացվել է գրականության հիման վրա: Կապված բնական լանդշաֆտների ոչնչացման հետ, ինչի արդյունքում ոչնչացվեցին սողունների և երկկենցաղների բնական ապրելավայրերը, նրանց տեսակային կազմը զգալի փոփոխությունների է ենթարկվել: Տարածքում կան սողուններից՝ Կույր օձ (*Typhlops vermicularis*), Վզնոցավոր (էյրենիս *Eirenis collaris*), Գյուրգա (*Vipera lebetina*), Կովկասյան ագամա (*Laudakia caucasica*), երկենցաղներից՝ կանաչ դոդոշ (*Bufo viridis*) կենդանատեսակները:

Տարածքում ՀՀ Կարմիր գրքի կենդանատեսակներից՝ հայտնի են

անադոնաշարավորներից՝ Գնայուկ բզեզներ(Carabidae), Թերթիկաբեղավորներ (Scarabaeidae), Սևամարմիններ (Tenebrionidae), Տերևակերներ(Chrysomelidae), Սիմպեկմա ճպուռ (Sympecma paedisca), Մորեխ հայկական(Gomphocerus armeniacus), Բոուլենի ձերմակաթիթեն(Artogeia bowdeni), Պորչինսկու իշամեղու (Bombus portshinskii Radoszkowsky) և այլն:

Կարմիր գրքյան կենդանատեսակներից է՝ Բալոբան(Falco cherrug J. E. Gray, 1834), Բազեանմանների կարգից, Հայաստանի համար անհետացող տեսակ է, որն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում՝ (ver. 3.1) «Endangered A2bcd+3cd+4bcd» կարգավիճակով:



Բալոբան

Ուսումնասիրվող և հարակից տարածքները, մարդու գործունեության արդյունքում, բավականաչափ յուրացված են, բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգերը, այնպես էլ կենդանիների հազվագյուտ տեսակները, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

8.2.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ.

Մարզի տարածաշրջանում է գտնվում Արագածի ալպյան արգելավայրը, բնության հատուկ պահպանվող տարածք է, Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1959 թվականին, ունի 300 հա տարածք: Գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Արագած լեռնազանգվածի 3200-3500 մ բարձրություններում: Ստեղծվել է սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:



Գործունեության տարածքը գտնվում է Ալայյան արգելավայրից գտնվում է բավականին մեծ հեռավորության վրա :

«Ագարակ» պատմամշակութային արգելոց»-ը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակ և Ոսկեհատ գյուղական համայնքների վարչական տարածքներում, Երևան-Աշտարակ-Գյումրի մայրուղու երկու կողմերում, Ամբերդ գետի աջ ափին, հրաբխային տուֆե ելուստներից կազմված ժայռոտ հրվանդանի վրա: Հուշարձանի /պետ. ցուցիչ՝ 2.4.1/ հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ բնակատեղիի ողջ տարածքը և շրջակայքն ամբողջությամբ պատված են ժայռափոր ու քարակոփ կառույցների հսկայածավալ համալիրներով, որոնց մեծ մասը շաղկապվում է Ագարակի վաղ բրոնզեդարյան բնակատեղիի հետ: Առկա են ժայռափոր խորշեր, դեպի այդ խորշերը տանող աստիճանահարթակներ և այլ նշանակության կերտվածքներ: Բոլոր այդ կերտվածքների, ինչպես նաև շրջանաձև, պայտաձև, մեանդրաձև փորվածքների, այդ փորվածքները միմյանց կապող առվակների կամ եռագագաթ, սեղանաձև զոհարանների շնորհիվ բնական լանդշաֆտը վերածվել է հսկա կոթողի:

8.2. 8 Պատմամշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ սահմանվում է Թալին քաղաքի և Դաշտադեմ բնակավայրի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԲԱՑՕԹՅԱ ԿԱՅԱՆ	քարի դար	Արտին լեռան հս-աե լանջին	Հ	«Սատանի դար» վայրում
2.				ԲՆԱԿԱՏԵՂԻ	մթա 2-1 հզ մ	1,5 կմ աե-հս.	Հ	Արալդի դաշտում, Կարմրաշեն տանող ճանապարհից 0,5 կմ աջ
	2.1.			դամբարանադաշտ	մթա 4-2 հզ մ		Հ	Կարմրաշեն տանող ճանապարհի խաչմերուկին հարող հատվածում
3.				ԴԱՄԲԱՐԱՆ ԹԱԼԻՆԻ ՄԵԾ	մթա 4-3 հզ մ	աե եզրին	Հ	Երևան-Թալին ավտոճանապարհից ձախ
4.				ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԹԱԼԻՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ	4-20 դդ.	հս մասում	Հ	
	4.1.			եկեղեցի	5 դ.		Հ	Կաթողիկեից հս, պահպանվել են միայն հիմնապատերը
	4.2.			Կաթողիկե	7 դ.		Հ	
	4.3.			պալատ	9-11 դդ.		Հ	Կաթողիկեից 150 մ հվ-աե
	4.4.			գերեզմանոց	4-20 դդ.		Հ	Կաթողիկեի շուրջը
		4.4.1		կոթող	4-5 դդ.		Հ	Կաթողիկեի հվ կողմում
		4.4.2		կոթող	4-5 դդ.		Հ	Կաթողիկեից 30 մ հվ-ամ, պահպանվել է պատվանդանը
		4.4.3		կոթող	4-5 դդ.		Հ	Կաթողիկեի հս կողմում, պահպանվել է պատվանդանը
		4.4.4		կոթող	4-5 դդ.		Հ	Կաթողիկեի հվ կողմում
		4.4.5		կոթող	4-7 դդ.		Հ	Կաթողիկեի հվ-աե կողմում
		4.4.6		կոթող	4-7 դդ.		Հ	Կաթողիկեի հվ-աե կողմում
		4.4.7		կոթող	4-7 դդ.		Հ	Կաթողիկեի հվ-աե կողմում, պահպանվել է պատվանդանը

		4.4.8	կոթող	4-7 դդ.		Հ	Կաթողիկեի հվ-աե կողմում
		4.4.9	խաչքար	9-10 դդ.		Հ	Կաթողիկեից 35 մ հս-ամ, երկատված, ընկած գետնին
		4.4.10	խաչքար	10 դ.		Հ	Կաթողիկեից 20 մ հս-ամ, ընկած գետնին, ստորին մասը չի պահպանվել
		4.4.11	խաչքար	10-11 դդ.		Հ	Կաթողիկեից հս-ամ, ընկած գետնին, ստորին մասը և վերնամասի ձախ անկյունը՝ կոտրված
		4.4.12	խաչքար	10-11 դդ.		Հ	Կաթողիկեից 25 մ հս-ամ, ընկած գետնին, ստորին մասը չի պահպանվել
		4.4.13	խաչքար	11դ.		Հ	Կաթողիկեի հս-ամ կողմում, ընկած գետնին
		4.4.14	խաչքար	13-14 դդ.		Հ	Կաթողիկեի ամ կողմում, կանգնեցված գետնին
5.			ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	613- 615 թթ.	ք.մ.	Հ	
	5.1.		կոթող	4-5 դդ.		Հ	Եկեղեցու հս-ամ կողմում
	5.2.		կոթող	4-7 դդ.		Հ	Եկեղեցու հս կողմում, պահպանվել է միայն պատվանդանը
	5.3.		կոթող	5-6 դդ.		Հ	Եկեղեցու հվ կողմում, պահպանվել է միայն պատվանդանը
	5.4.		կոթող	5-6 դդ.		Հ	Եկեղեցու հս-ամ կողմում, խիստ քայքայված
	5.5.		կոթող	6-7 դդ.		Հ	Եկեղեցու հս-ամ կողմում, վերին և ստորին մասերը՝ կոտրված
	5.6.		խաչքար	10-11 դդ.		Հ	արձանագիր, Եկեղեցու խորանում
	5.7.		տապանաքար	874 թ.		Հ	Եկղ-ուց 10 մ հվ-ամ, կոտրված՝ 6 մասի
	5.8.		տապանաքար	9-10 դդ.		Հ	Եկղ-ուց 10 մմ հվ-ամ, արձանագիր
6.			ԵԿԵՂԵՑԻ Ս. ԳԵՎՈՐԳ	19 դ.	ք.մ.	Տ	
	6.1.		զանգակատուն	19 դ.		Տ	կից է Եկեղեցուն ամ-ից
	6.2.		խաչքար	10 դ.		Հ	ազուցված ամ ճակատին,

						արտաքուստ, մուտքից աջ
6.3.		խաչքար	13 դ.		Հ	ագուցված հվ ճակատին, արտաքուստ, մուտքից աջ
6.4.		խաչքար	13 դ.		Հ	ագուցված աե ճակատին, արտաքուստ
6.5.		խաչքար	19 դ.		Տ	ագուցված հվ ճակատին, արտաքուստ, մուտքից ձախ
7.		ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1946 թ.	ք.մ.	Տ	քաղաքի սկզբնամասում, ճարտ. Ո. Իսրայելյան
8.		ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1979 թ.	հս մասում	Տ	բարձունքի վրա
9.		ՄԱՏՈՒՌ «ՄԱՆԴՈՒԽՏ ԿՈՒՅՍ»	19 դ.	ամ եզրին	Տ	վրկնգ՝ 1991- 1992 թթ.՝ Ամիրբեկ Դերգյանի կողմից
9.1.		խաչքար	7-8 դդ.		Հ	մատուռի ներսում
9.2.		խաչքար	7-8 դդ.		Հ	մատուռի ներսում
9.3.		խաչքար	8 դ.		Հ	մատուռի ներսում, Թալինի հանրահայտ կլոր խաչքարն է
9.4.		խաչքար	8-9 դդ.		Հ	մատուռի ներսում
9.5.		խաչքար	10 դ.		Հ	մատուռի ներսում
10.		ԶՐԱՂԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	19-20 դդ.	1 կմ հս- աե	Տ	Արալըղի դաշտում, Կարմրաշեն տանող ճանապարհից աջ, պահպանված ջրաղացների թիվը մոտ. 30 է
11.		ՔԱՂԱՔԱՏԵՂԻ ԹԱԼԻՆ	մթա 2-1 հզ մ, մջնդ	հս մասում	Հ	«Ջուլհակ» բլրի ստորոտին
11.1		ամրոց Թալին	մթա 4 դ., 12- 16 դդ.		Հ	«Ջուլհակ» բլրի վրա
11.2		դամբարանադաշտ	մթա 2-1 հզ մ, մթա		Հ	«Ջուլհակ» բլրի շուրջը, Ս. Կաթողիկե եկեղեցուց հս

				4-3 դդ.		
	11.3		ջրամբար	մթա 1 հզմ, վաղ մջնդ		Համրոցից հս, Թալին- Մաստարա հին ճանապարհին, Ս. Կաթողիկե եկեղեցուց 500 մ հս
12.			ՔԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ. ԹԱԼԻՆԻ ՄԵԾ	13 դ.	հվ-աե եզրին	Հ «Չայիր» վայրում, նախկինում սխալմամբ ներկայացվել է Դաշտադեմ գյուղով

Կարևոր է Թալինի դամբարանադաշտը (գերեզմանատուն), որը գտնվում է Թալինի քաղաքամերձ տարածքի Հարավ-արևելքում՝ Թալին- Գյումրի ճանապարհի երկայնքով:

ԴԱՇՏԱԴԵՄ գյուղ

Աղյուսակ 7

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ ԴԱՇՏԱԴԵՄ	7-19 դդ.	գյուղից 2 կմ հվ-ամ	<	1
	1.1		Գաղտնուղի	11-13 դդ.		S	1.2
	1.2		Եկեղեցի	10 դ.		<	1.3
	1.3		Միջնաբերդ	7-10 դդ.		<	1.1
2			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	10-13 դդ.	գյուղից 0.3 կմ աե	S	2
3			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-14 դդ.	գյուղից 0.5 կմ հվ	S	3
4			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-14 դդ.	գյուղից 1.5 կմ հվ-աե	S	4
5			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-16 դդ.	գյուղից 1.3 կմ հվ-ամ, Սբ. Քրիստափոր եկեղե- ցի տանող ճանապարհի աջ կողմում, դաշտի մեջ	S	5: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 6 հուշարձան (5.1-5.6)
6			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	14-15 դդ.	գյուղից 2 կմ հվ-ամ, Դաշտադեմ ամրոցից 300 մ հվ	S	6
	6.1		Խաչքար	1481 թ.		<	6.1
7			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	16-17 դդ.	գյուղից 1.2 կմ հվ, Ժիրանի այգիների տարածքում	S	7
	7.1		Խաչքար	1594 թ.		<	7.1

8		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՔԱՂԵՆԻ»	7-18 դդ.	գյուղից 2 կմ հվ-ամ, Թալին-Արմավիր ճանա- պարհի երկու կողմում	S	8: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է ևս 14 հու- շարձան (8.1-8.14)
	8.1	Հնձանների համալիր	17-18 դդ.		S	8.17
	8.2	Ձիթհան	12-14 դդ.		<	8.15
	8.3	Մատուռ	10-15 դդ.	գյուղատեղիի ամ կող- մում, Թալին-Արմավիր ավտոճանապարհից աջ	<	8.16
9		ՂԱՄԲԱՐԱՆԱՂԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղի աե մասում	<	9
10		ՂԱՄԲԱՐԱՆԱՂԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղի ամ մասում	<	9
11		ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՔՐԻՍՏԱՓՈՐ	7 դ.	գյուղից 2.5 կմ հվ-ամ	<	10
	11.1	Գերեզմանոց	7-20 դդ.	Եկեղեցու շուրջը	S	10.3: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 17 հուշար- ձան (10.3.1- 10.3.17)
	11.2	Ջանգապատուն	13-14 դդ.	Եկեղեցու հս-աե կողմում	<	10.1
	11.3	Շինություններ օժանդակ	13-14 դդ.	Եկեղեցու շուրջը	S	10.2
12		ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	գյուղի հվ-ամ մասում, Սբ. Քրիստափոր Եկե- ղեցի տանող ճանա- պարհից ձախ՝ բարձրադիր վայրում	<	11
13		ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	գյուղից 1 կմ ամ, «Չայիր» վայրում, ձորի մեջ	<	12

Նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային հուշարձանները բացակայում են: Գործունեության տարածքը չի առնչվում նշված պատմամշակութային հուշարձանների հետ:

8.2.9 Բնության հուշարձաններ

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման հավելվածի՝ Արագածոտնի մարզում առկա են. 23 բնության հուշարձաններ, որից 10 հատ՝ երկրաբանական, 4 հատ ջրաերկրաբանական և 4 հատ ջրագրական, 5 հատ բնապատմական հուշարձաններ:

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	2	3
	Երկրաբանական հուշարձաններ	
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ
5.	«Քարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից մոտ 3.0 կմ հս-արմ
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» էրոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ, Արայի լեռան հրաբխի խառնարանում
9.	«Չինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, «Էլոյի բերդ» տանող ճանապարհին
10.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ
	Ջրաերկրաբանական հուշարձաններ	
11.	«Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, Ճ.մ-ից 1870 մ բարձրության վրա
12.	«Քյահրիզ» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերին եզրին
13.	«Գեղաձոր» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա

14.	«Ջաղացի» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1180 մ բարձրության վրա
	Զրագրական հուշարձաններ	
15	«Ամբերդ» լիճ	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
16	«Լեւինգ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
17	«Ումրոյ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
18	«Գեղարոտի» ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11 կմ հս-արմ
	Բնապատմական հուշարձաններ	
19	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ
20	«Արտաշավան» բնապատմական համալիր	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին
21	«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ, Քասախ գետի կիրճի աջ լանջին
22	«Քասախի դարավանդներ»	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին
23	«Քասախի կիրճ»	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ

Գործունեության տարածքին ամենամոտ բնության հատուկ պահպանվող տարածքը «Տատիկ» քարե քանդակ երկրաբանական հուշարձանը՝ գտնվում է մոտ 267 մ հեռավորության վրա:

8.2.10 Սոցիալ-տնտեսական.

Արագածոտնի մարզի տարածքը կազմում է 2773բառ. կմ, որը կազմում է ՀՀ տարածքի 9,3%-ը: Ներառում է 8 համայնք, 3 բաղաձևեր և 118 գյուղական բնակավայրեր: Բնակչության թվաքանակը 2024թ. տարեսկզբի դրությամբ կազմում է 131,8 հազ. մարդ: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 218,597,2 հա, որից վարելահողերը՝ 54,299,9հա:

Տարածքը Territory	2 773 քառ. կմ/ sq. km
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the RA, %	9.3
Համայնքներ, 2024թ. տարեկզբի դրությամբ Communities, as of the beginning of 2024	8
Քաղաքներ Towns	3
Գյուղեր Villages	118
Բնակչության թվաքանակը 2024թ. տարեկզբի դրությամբ Population number as of the beginning of the year, 2024	131.8 հազ. մարդ/ ths. person
այդ թվում՝ including:	
Քաղաքային urban	27.2 հազ. մարդ/ ths. person
Գյուղական rural	104.6 հազ. մարդ/ ths. person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ., % Share of marz population in the total population of the RA 2023, %	4.4
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ., % Share of urban population size 2023, %	20.6
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	218 597.2 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	54 299.9 հա/ ha

Մարզի տնտեսության հիմնական ուղղությունը արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն են: Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և խմիչքների, ըմպելիքների թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես, հացահատիկային մշակաբույսերի արտադրության) և անասնաբուծության մեջ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Համաձայն ՀՀ Վիճակագրության կոմիտեի կայք էջի՝ 2023թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.2 %,
- գյուղատնտեսություն 9.9 %,
- շինարարություն 2.9 %
- մանրածախ առևտուր 1.8 %
- ծառայություններ 0.8 %:

Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիներ՝ Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան-Աշտարակ-Սպիտակ և Երևան-Արմավիր-Քարակերտ-Գյումրի: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Թալին համայնք. համաձայն Թալին համայնքի 2023-2027թթ. 5-ամյա զարգացման ծրագրի՝ Թալին համայնքը գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան փեշերին, ծովի մակերևույթից 1585 մետր բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 70 կմ, մարզկենտրոն Աշտարակ քաղաքից՝ 48 կմ: Թալին համայնքը նախկինում եղել է Թալինի շրջանի վարչական կենտրոնը: Տարածքը քարքարոտ է, կան շատ բլուրներ, ձորեր, լեռներ և անհարթ տարածություններ:

Բնակլիմայական պայմանները փոփոխական են, հիմնականում ցամաքային և ոչ բարենպաստ են գյուղատնտեսության համար: Հողերը հիմնականում ոռոգովի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Ձմեռը չափավոր ցուրտ է, ամառը զով, երբեմն էլ շոգ ու երաշտ: Գարունը շուտ է բացվում, աշունը ուշ վերջանում: Ձնածածկույթը տարածքում տևական չի լինում, ուղեկցվում է բքի վերածվող ուժեղ քամիներով: Գարնանը լինում են տեղատարափ անձրևներ: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը տատանվում է 400-450 մմ-ի սահմաններում:

Թալին համայնքով է անցնում Հյուսիս-Հարավ միջպետական նշանակության ավտոմայրուղին, Հյուսիս-Հարավ մայրուղին և Գյումրի-Երևան երկաթգիծը: Համայնքում կան երեք արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցից մեկը զբաղվել է ադամանդե քարերի մշակմամբ, ունենալով բավականին մեծ արտադրական հզորություն, ներկայումս չի գործում, իսկ մյուս երկուսը գործում են, որոնցից մեկը զբաղվում է կաթնամթերքի արտադրությամբ, իսկ մյուսը զբաղվում է հակակարկտային կայանների արտադրությամբ: Այս երկու գործող ձեռնարկությունները իրենց արտադրանքը հիմնականում սպառում են Հանրապետության տարածքում:

Համայնքում առկա է ջրամատակարարման, ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը, կապի և փոստային ծառայությունները: Արտադրվող հիմնական գյուղատնտեսական արտադրանքը՝ հացահատիկն է (ցորեն և գարի), կաթը և միսը: Արտադրանքի ծավալները մեծ չեն, հիմնականում ունեն սեփական սպառման նշանակություն: Համայնքի բնակավայրերուի մեծ մասում ոռոգման ջուրը բացակայում է,

Թալին համայնքը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և պատմական հարուստ ժառանգության, հնարավորություն ունի վերածվելու տուրիստական վայրի: Համայնքի զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող պատմա-մշակութային հուշարձաններից են Թալին քաղաքում գտնվող Կաթողիկե եկեղեցին, Իջևանատունը (Քարվանսատուն), Սուրբ Աստվածածին և Սուրբ Գևորգ եկեղեցիները:

Թալին համայնքի վարչական տարածքում գործում են 11 հիմնական, 25 միջնակարգ դպրոցներ, Թալինի ավագ դպրոցը և Արագածոտնի տարածքային պետական քոլեջը: Համայնքն ունի նորակառույց մարզադպրոց և ֆուտբոլի մարզադաշտ, մեկ մշակույթի կենտրոն, որտեղ գործում են ժամանակակից և ժողովրդական երգի-պարի խմբեր, 2 զբոսայգի՝ մեկը քաղաքային, մեկը մանկական:

Համայնքում աղբահանությունը կատարվում է կենտրոնացված աղբավայրերում, որտեղ պարբերաբար կատարվում է բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: **Թալին քաղաքը** գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան լանջին, Երևան քաղաքից 65կմ հեռավորության վրա: 2024թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչությունը կազմում է 4,4հազ. մարդ: Տնտեսության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում արդյունաբերությունը, առկա է բնական ադամանդի մշակությամբ զբաղվող ձեռնարկություն: Զարգացած է սննդի արդյունաբերությունը: Ունի Չանախ տեսակի պանրի և կաթնամթերքի գործարան: Համախառն արտադրանքի մեծ մասը տալիս է գյուղատնտեսությունը: Համայնքում արտադրվող հիմնական գյուղատնտեսական արտադրանքը հացահատիկն է (ցորեն, գարի), կաթը և միսը: Արտադրանքի ծավալները մեծ չեն, հիմնականում ունեն սեփական սպառման նշանակություն: Զարգացած է անասնապահությունը, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Քաղաքը հարուստ չէ մշակութային օջախներով, ունի մեկ մշակութային կենտրոն:

Համայնքի և քաղաքի հիմնախնդիրներից են՝ ոռոգման ջրի և ջրամատակարարման ցանցի անբավարար վիճակը կամ բացակայությունը, գյուղատնտեսական տեխնիկայի

անբավարար վիճակը, ներքաղաքային ճանապարհների անբավարար վիճակը, արդյունաբերական ձեռնարկությունների ոչ լրիվ հզորությամբ գործելը, գործազրկության և արտագաղթի բարձր մակարդակը:

Դաշտադեմ բնակավայր. Բնակավայրը գտնվում է ՀՀ արագածոտնի մարզում, ներառված է Թալին խոշորացված համայնքում: Համաձայն Դաշտադեմ համայնքի 2016-2021թթ. զարգացման ծրագրի՝ բնակավայրը գտնվում է Արտենի լեռան հարավ-արևելյան ստորոտոին՝ ծովի մակարդակից 1416մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 52 կմ: Բնակավայրի վարչական տարածքը կազմում է 139,66 հա: Համաձայն վիճակագրության կայք էջի՝ բնակչությունը 2024թ. դրությամբ կամում է 576 մարդ: Բնակավայրը գտնվում է նախալեռնային գոտում՝ կլիման չորային է, ձմեռն անցնում է քիչ ձյան տեղումներով, անձրևները լինում են խոր աշնանար: Բնակավայրի միջով անցնում է նոր վերակառուցված M 9 Թուրքիայի սահման միջպետական ավտոմայրուղին: Բնակավայրը գազիֆիկացված է: Գյուղն ունի դպրոց, բուժկետ, մանկապարտեզ:

Բնակավայրի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է, բնակչությունը հիմնականում զբաղված է՝ անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղում առկա են պատմամշակութային հուշարձաններ: Գյուղից 2.5 կմ հարավ գտնվում է VII դարով թվագրված «Սուրբ Քրիստափորի» վանքը, VII-IX դարերի՝ «Դաշտադեմի ամրոցը», Քադենի գյուղատեղին, միջնաբերդ, խաչքարեր՝ պահպանվում VII դարի պատմական կլոր – խաչքարը, Զանգակատուն և այլն: Համաձայն Թալին համայնքի զարգացման ծրագրի՝ նախատեսվում է բնակավայրի ոռոգման համակարգի վերանորոգում, կենտրոնացված ջրահեռացման համակարգի ստեղծում, ճանապարհների վերանորոգում, պատմամշակութային ժառանգության վերականգնում, որը կխթանի տուրիզմի զարգացմանը:

9. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման , փակման փուլեր).

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ՀՀ Արագածոտնի մարզի, Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Սաիդներ դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամասում, 7,4 հա տարածքի վրա: Համաձայն տրված լիցենզիայի՝ նախատեսվում է 8000 կՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 9000կՎՏ հզորությամբ 10/08/08 ենթակայանի կառուցում,որը միացվում է 220/110/10 կվ «Աշնակ» տրանսֆորմատորային ենթակայանի 10 կվ լարման N12 պահուստային բջջին:

Նախագիծը կատարված է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոններ» N 592-Ն որոշման պահանջները: Գործունեությունն իրականացվելու է ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 583-Ն որոշման պահանջներին համապատասխան:

9.1 Շահագործման փուլ.

Արևային կայանի տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները: Նախատեսվում է 8.0 ՄՎտ դրվածքային հզորությամբ ֆոտովոլտային կայանի կառուցում: Համաձայն նախագծային լուծումների արևակայանի պիկային հզորությունը նախատեսվում է 8.628 ՄՎտ: Ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 12,068 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 715 Վտ պատվելագույն հզորությամբ, որոնք 20 հատ 350 կՎտ և 4 հատ 250 կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8 կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Վահանակների զբաղեցրած մակերեսը կազմում է մոտ 2,2 հա:

Ընտրվել են TSM-NEG21C.20 Trina Solar Co., Ltd. ֆիրմային արտադրության 23% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 715 Վտ պատվելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2384x1303x33 մմ: Փոխակերպիչները Ginlong Solis արտադրության, մոդելը GU3P350K06-EV-ND և GU3P250K06-EV-ND հզորության, ցանցային տեսակի: Արևային էլեկտրակայանի տեղադրման համար նախատեսվում է կառուցել ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով, իսկ կոնստրուկցիաները կտեղադրվեն բետոնե հիմնակմախքների վրա՝ ամրացման պտուտակներով (անկեր պտուտակներով: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են կոնստրուկցիայով հորիզոնի նկատմամբ 23° թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35 մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24 մ/վ է, (ՀՀՇՆ 22-01-2024):

Տրանսֆորմատորային ենթակայան: Արևային կայանի տարածքում նախատեսվում է կառուցել 1 հատ 10/0.8/0.8 կՎ լարման 9000 կՎԱ հզորությամբ լրակազմ տրանսֆորատորային ենթակայան, որը 10 կՎ օդային գծով միանալու է Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ պատկանող 220/110/10 կՎ «Աշնակ» ենթակայանի 10 կՎ լարման N°12 պահուստային բջիջին:

Ենթակայանը կառուցելու համար նախատեսվում է տեղադրել 10/0.8/0.8 կՎ լարման 9000 կՎԱ հազորության երկփեղկված փաթյոթներով եռաֆազ ուժային տրանսֆորմատոր՝ 10 կՎ լարման վակուումային անջատիչով, բլոկով: ԼՏԵ-ի մուտքում նախատեսվում է տեղադրել «ԻՆ-110Ֆ2» մակնիշի 110 կՎ գծային պորտալ՝ AC-95/16 մակնիշի հաղորդալարով: 10 կՎ լարման մուտքի բլոկի յուրաքանչյուր գծի վրա տեղադրվելու է ԻԺԻ-10 շարժաբեռով ԾԷԻԱԱ-2-10/1000Օ1 տիպի գծային բաժանիչ: ԼՏԵ-ի 10 կՎ լարման ԲՄ-ին միացումը հաղորդման գծին նախատեսվում է իրականացնել 10 կՎ լարման АПБПыГ-1х-300/35-10 կՎ մակնիշի միաֆազ մալուխով:

Տեղադրվելու են 1 հատ տրանսֆորմատոր, որի տակ կառուցվելու է 5 տոննա տարողությամբ յուղակուտակիչ հոր, յուղի ծավալը կկազմի 4 տոննա: Ենթակայանի տարածքը զբաղեցնում է մոտ $4 \times 9 = 36$ քառ.մ

Էլեկտրական էներգիայի հաշվառքը ենթակայանի տարածքում տեղադրվում է բլոկային մետաղական կոնստրուկցիա, որի վրա մոնտաժվում է հաշվիչ:

Օդային գիծ. Օդային գիծը տեղակայված է ծովի մակարդակից միջինը 1450 մ-1570 մ բարձրության վրա: Ուղեգծի ընդհանուր երկարությունը կազմում է 2790 մ, «Աշնակ» 220/110/10 կՎ լարման ՓԲՄ-ի թիվ 12 բջջից մինչև 10 կՎ ՕԳ-ի վերջի թիվ 25 հենարանը, 2460 մետրը օդային հատվածը: Նախատեսված է 2460 մետրը օդային գծի 600 մ-ը անցնում է Թալինով, 1860 մ Դաշտադենով:

Օդային գծի կառուցման համար տեղադրվելու են 25 հատ երկշղթա մետաղական

հենարաններ, որից 13 հատը «2П10 –Սևանդ» տիպի միջանկյալ, 3 հատը՝ «22АУ 10-Սևանդ» տիպի խարսխային, 3 հարը՝ «2АУ10+3-Սևանդ» տիպի խարսխային, 6 հատը՝ «2ПА10-Սևանդ» խարսխա-անցումային: Ուղեգիրը նախատեսված է անցկացնել չբնակեցված համայնքային տարածքներով և բնակիչների հողամասերի տարածքների հետ չի առնչվում: Հենասյունների տեղադրման համար համայնքի հետ ընկերությունը կկնքի սերվիտուտի պայմանագիր՝ համապատասխան թույլտվությունները ստանալուց հետո:

10կվ լարման երկշղթա օդային գիծը նախատեսվում է մոնտաժել 6 հատ Ըհ- 95/16 մակնիշի ալյումին-պողպատ հաղորդալարով: ՕԳ-ից ներանցումը «Աշնակ»220/110/10ԿՎ ԵԿ-ի 10կվ լարման ԲՄ-մ նախատեսված է իրականացնել երկշղթա 10կՎ АПБПыГ-1х-120/35-10կՎ մակնիշի 6 հատ միաֆազ մալուխներով: Օդային գծի վերջում թիվ 25 երկշղթա վերջնային հենարանի վրա նախատեսված է տեղադրել ÊМ-1 սարքվածք՝ մալուխների և կայմային կցորդիչների ամրակալման համար: ՕԳ-ի աշխատանքի բնականոն ռեժիմում հազորդալարերի հեռավորությունը հողի մկերկությանից պետք է լինի 6մ-ից ոչ պակաս՝ չբնակեցված վայրերի համար, իսկ բնակավայրում և ճանապարհի անցումներում՝ 7մ-ից ոչ պակաս: Նախագծով նախատեսվում է ՕԳ-ի բոլոր հենարանների հողանցում, որը կատարվում է թիվ 1 հենարանի հողանցման սարքվածքը միացնելով «ՍՈԼԵՅ» ԼՏԵ-ի հողանցման սարքին: Հենարանների հողակցումը նախատեսված է ճառագայթային՝ 12մ տրամագծով կլոր պողպատով:

Էլեկտաէներգիայի կոմերցիոն հաշվարկի համար նախատեսվում է տեղադրել երկկողմ հաշվարկ իրականացնող էներգիայի հաշվառքի էլեկտրոնային հաշվիչ:

Էլեկտրահոդորդման օդային գծի ուղեգիծն անցնում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի Թալին և Դաշտադեմ բնակավայրերի չմշակվող համայնքային հողերով:

Մալուխագիծ. միացումները կատարվելու է 10կՎ АПБПы-10 1х300/50մմ2 կտրվածքի մալուխագծով, որի համար նախատեսվում է 10 կՎ 30մ երկարության ՄԳ-ի կառուցում: Մալուխագիծն ամբողջությամբ գտնվում է արևային կայանի տարածքում և միանում է ՕԳ-ի պորտալին: Մալուխն անցկացվում է հողում, ավագե լցվածքով խրամուղու մեջ և պաշտպանվում ե/բ սալերով: Մալուխի տեղադրումը կատարվում է Ø160 պոլիէթիլենային խողովակով: Մալուխի անցկացման խորությունը 1մ է: Մալուխը տեղադրվում է օձաձև՝ ջերմային դեֆորմացիաներից խուսափելու համար: Մալուխը խրամուղու մեջ տեղադրելուց առաջ փորված խրամուղու մեջ պատրաստվում է 100մմ հաստությամբ ավագե անկողին, այնուհետև տեղադրվում է մալուխը և ծածկվում է 150մմ ավագե շերտով, որից հետո տեղադրվում է ե/բ սալ և խրամուղին լցվում է ավագակոպիճով: Մալուխը միացվում է ջերմամեկուսացվող ծայրային կցորդիչներով: Խրամուղիները փորվելու են էքսկավատորով: Մալուխագիծն ամբողջությամբ անցնում է արևակայանի սեփական տարածքով:

Ենթակայանի Շանթապաշտպանություն.հողակցում. ԼՏԵ-ի հողանցման համար նրա շուրջը նախատեսվում է ստեղծել հողանցման եզրագիծ, որին ոչ պակաս քան 2 անգամ պետք է միացնել ենթակայանի սարքավորումների մետաղական իրանները: Հողանցման եզրագիծն իրականացվելու է 4x40 շերտապողպատից/հորիզոնական հողանցիչ / 2.5մ երկարությամբ 50x50x5մմ երկարությամբ անկյունային պողպատից/ուղղահայաց էլեկտրոդ/: Ենթակայանի Հողանցման դիմադրությունը տարվա ցանկացած եղանակի չպետք է գերազանցի 40հմ: Հողանցման կոնտուրի մոնտաժումից հետո ստուգվելու է հողանցման կոնտուրի

դիմադրությունը, որպեսզի չբավարարելու դեպքում ավելացնել էլեկտրոդների քանակը: Բոլոր սարքավորումների լարման տակ չգտնվող մետաղական կոնստրուկցիաները նախատեսվում է հողանցել՝ 2 կետով: Հողանցիչները սարքավորումների մետաղական իրաններին միացնել հեղուսներով, իսկ մետաղական կառուցվածքներին՝ եզրածածկ եռակցումով:

Ճանթապաշտպանությունն իրականացված է 2 հատ C-35 տիպի ճոպանով: Ճոպանի մոնտաժը նախատեսված է N2-N5 հենարանների հատվածում: Մեկ ճոպանի երկարությունը ուղեգծով կազմում է 335.0մ: Հաղորդալարերի մեկուսացման համար նախատեսված են ապակյա մեկուսիչներ: Հաղորդալարերի ձգող շարանները կոմպլեկտավորված են 4-ական ПС70Е տիպի մեկուսիչներով: Հենարանների հողակցումը նախատեսված է ճառագայթային հողակցիչներով՝ Ø12մմ կլոր պողպատով՝ յուրաքանչյուր հենարանի համար նախատեսված հողակցման սարքվածքով, պահանջվող նորմատիվային դիմադրությանը համապատասխան:

Ներտարածքային լուսավորության համակարգ. նախատեսվում է լուսավորության հենարանների տեղադրում, ստորգետնյա մալուխազծերի անցկացումը, լուսավորության ավտոմատ ղեկավարման արկղի մոնտաժումը և սնուցումը 25կՎԱ/0.8/0,4կվ ՏԵ-ի 0,4կվ վահանից: Լուսավորության ցանցը կառուցվում է 4,0մ բարձրության մետաղական բարձակներով՝ հենարաններով: Լուսավորությունը կառավարվում է լուսավորության ղեկավարման արկղից (ԼՂԱ), որն ունի ավտոմատ և ձեռքի կառավարման ռեժիմներ:

Պաշտպանական հողանցում. Ֆոտովոլտային կայանի հողանցումն իրականացնել համաձայն՝ СНиП 3.05.06-96: Բոլոր հենարանների վրա տեղադրվելու է հողակցման էլեմենտներ: Հողի մակերևույթին 0.6մ խորության վրա հավաքվում է հողանցման սարքվածքը (կոնստուրը), որը բաղկացած է.

- հողանցման հորիզոնական հաղորդիչից (40x4 շերտապողպատ),
- հողանցման հաղորդաձող (50x50x5, L=1,5-2.0մ անկյունակ),
- հողանցման հաղորդալարերից:

Հողանցման սարքվածքն իրականացվել է տեսական հաշվարկի հիման վրա: Հողանցման դիմադրությունը տարվա ցանկացած եղանակի չափեր է գերազանցի 40հմ:

Պաշտպանական հողանցումն իրականացվում է հողանցման հաղորդալարերով: Այդ նպատակով ֆոտովոլտային պանելների այլումինե իրանը հողանցման հաղորդալարով միացվում է հողանցման համակարգին: Բոլոր մետաղական ոչ հոսանքատար սարքավորումները պետք է հողանցվեն:

Արևակայանի ցանկապատում. Էլեկտրակայանի պարագծով նախատեսվում է կառուցել ցանկապատ, որն իրականացվում է 2մ բարձրության մետաղական խողովակներով՝ երկաթբետոնյա հիմքերով՝ 4 դարպասային մուտքով:

Պահակատուն. Էլեկտրակայանի մուտքի մոտ նախատեսվում է 30մ² մակերեսով տնակ պահակատուն՝ պահեստային հատվածով: Պահեստային հատվածում նախատեսվում է վնասված վահանակների պահեստավորում: Պահակատան մասը ջեռուցվելու է սեփական կարիքների 25կՎտ/0.8/0,4կվ տրանսֆորմատորից, ջեռուցվելու է էլեկտրական ջեռուցիչով:

Արտակարգ իրավիճակներ և տեսահսկման համակարգ. տարածքում նախատեսվում են տեղադրել հրդեհաշիջման վահանակներ և կրակմարիչներ: Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչների, ավազե տարայի տեղադրում: Տեղադրվելու է 17 հատ տեսախցիկ, գիշերային տեսանելիության

հնարավորությամբ, լուսատուներ՝ 50Վտ հզորությամբ, 1 հատ հրդեհաշիջման վահանակով, 1 հատ հաշվառքի կետում և 1 հատ մուտքի մոտ:

9.2 Շինարարության փուլ.

Գործունեության տարածքում բացակայում են շենք-շինություններն, ուստի քանդման աշխատանքներ չեն նախատեսվում: Կատարվելու են միայն հողային աշխատանքներ:

Շինհրապարակ. գործունեության իրականացման համար կազմակերպվելու շինհրապարակ՝ 750 մ² մակերեսով:

Շինարարական հրապարակում լինելու են.


- աշխատակազմի սենյակ- 1 հատ
- հանդերձարան/խոհանոց-1 հատ
- բիոզուգարան - 1 հատ
- պահակատուն-1 հատ
- շին աղբի հավաքման կետ,
- հակահրդեհային վահանակ, հիդրատներ

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս: Շինհրապարակներում նախատեսված է շինարարական աղբի պահման

տարածք:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ

**"ՍՈՒԵՅ" ՍՊԸ 8.0 ՄԿտ հզորությամբ արևային էլեկտրակայան
ՀՀ, Մարզ Արագածոտն, համայնք Թալին, գյուղ Ղաշտաղեն**



Շինարարության ժամանակ նախատեսվող նյութերի պահեստավորման տարածք, շինտեխնիկայի կայանատեղի ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող աշխատակազմի սենյակ, պահակատուն, պահեստ, աղբի հավաքման կետ: Շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող համապատասխան տարողության պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարգեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ՝ շինարարական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը/շլամ/ կհեռացվի որպես շինաղբ: Շինհրապարակում նախատեսվում է նաև համապատասխան տարողության ջրի ժամանակավոր ռեզերվուար:

Շինհրապարակը ցանկապատվելու է: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները, տեղադրվելու են վտանգն ազդարարող համապատասխան նշաններ, տեղեկատվական պաստառ՝ Կառուցապատողի վերաբերյալ:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

Լուսավորություն և ջեռուցում. շինարարական աշխատանքները կատարվելու են

ցերեկային ժամերին: Տարածքում աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր հանգստի կացարան(տնակ), որի լուսավորությունը և ջեռուցումը կկատարվի ժամանակավոր էլեկտրական հոսանքի անցկացման՝ դիզելգեներատորների միջոցով:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ. շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, որոնք լինելու են Կապալառու կազմակերպության սեփական միջոցները կամ վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Օգտագործվելու են, մասնավորապես.

- հորատող
- Հարթեցնող
- Բեռնատար-2 հատ
- Բուլդոզեր-1 հատ
- Ավտոմոբիլային ամբարձիչ
- Խորքային թրթռիչ
- Էքսկավատոր-1 հատ
- Բետոնախառնիչ և այլն:

Հողային ռեսուրսներ. նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի և դեպի ենթակայան տանող ստորգետնյա էլեկտրական գծի անցկացման նպատակով խրամուղիների փորման, հողատարածքի ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի կառուցման, ինչպես նաև օդային գծի հենասյունների տեղադրման համար: Տարածքում հազվադեպ, տեղ-տեղ առկա է հողաբուսական շերտ՝ տարբեր բույսերի արմատներ, խճավազ, կավավազ: Բուսահողի հզորությունը կազմում է 0,0-0,2մ:

Արևակայանի, ենթակայանի, մալուխագծերի խրամուղիների, օդային գծի հենասյունների տեղադրման գործողությունների արդյունքում կատարվելու են 1500մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից հանվող բուսահողի ծավալը կազմելու է 300մ³: Հողային զանգվածի մի մասն օգտագործվելու է տեղում, մյուս մասը տեղափոխվելու է համայնքի հետ համաձայնեցված վայր՝ տարածքից 600մ հեռավորության վրա:

Ջրային ռեսուրսներ. Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից:

Կեղտաջրերի հեռացում. Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող՝ շարժական 1,0*1,5 չափերի 1 հատ բիոզուգարան՝ լվացարանով:

Թափոններ. Շինարարության փուլում կատարվելու են միայն հողային աշխատանքներ, շինադր չի առաջանալու: Առաջանալու են թափոններ՝ տարբեր նյութերի մնացորդներ (ավազ, մանրախիճ, յուղոտված լաթեր), աղտոտված լաթեր, պարկեր, կենցաղային աղբ, մետաղական մնացորդներ (մետաղյա լարերի մնացորդներ): Համաձայն համայնքի կողմից ներկայացված տեղեկանքի աղբի և ավելցուկային հողային զանգվածը տեղակայվելու է աղբավայրում՝ արևակայանից մոտ 600 մ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Հավելված 9:

Սոցիալական. Շինարարական աշխատանքներին ներգրավվելու են 33 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Ներգրավվելու են համայնքի բնակիչներ, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

Բարեկարգում. Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով:

9.3 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը.

Ընդհանուր աշխատանքները տևելու է 2 տարի կամ 24 ամիս, որից հողային աշխատանքները տևելու են 4 ամիս :

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ըստ նախատեսված ժամանակացույցի՝ հերթականությամբ.

1. Նախահաշվային և նախապատրաստական աշխատանքներ:
2. Հողային աշխատանքներ:
3. Խրամուղիների նախապատրաստում և մալուխների տեղադրում:
4. Արևային վահանակների տեղադրում:
5. Մոնտաժային աշխատանքներ:
- 6** Հենասյուների տեղադրում:
7. Տրանսֆորմատորների տեղադրում:
8. Լուսավորության համակարգի կառուցում
9. Կարգավորման աշխատանքներ և այլն:

Գործողություն	ամիսներ											
	1-2	3-4	5-6	7-8	9-10	11-12	13-14	15-16	17-18	19-20	21-22	23-24
Տեխպայմանի ստացում, Նախագծային, - նախահաշվ. Աշխատանքներ												
Նախագծի փորձաքննություններ												
Նախն. ենթակառուցվածք. լուծումներ												
Հողային աշխատանքներ												
Ճանապարհ, ցանկապատ												
Մետաղական հենառուցվածքների մոնտաժ												
Օժանդակ շենք- շինությունների կառուցում												
Արևային ՖՎ վահանակների տեղակայում												
Այլ սարքավորումների տեղակայում												
Արևային համակարգերի էլեկտրամոնտաժ												
Բարձր լարման գծի հենասյուների տեղադրում												
Տրանսֆորմատորների տեղակայում												
Կարգաբերման- գործարկման աշխատանքներ												
Ավարտական փաստաթղթերի ստացում, էլեկտրակայանի գործարկում												

9.4. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Ջուր: Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը կնքվելու է Կապալառու կազմակերպության կողմից համապատասխան թույլտվությունները ստանալուց հետո՝ շինարարական աշխատանքների սկզբում:

Բուն շինարարությունը և արևակայանի գործարկման փուլը տևելու է 416 օր, շինարարության ընթացքում աշխատելու են առավելագույնը 33 աշխատակից:

Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է տարածքի հրդեհամարման, անիվների լվացման, տարածքի ջրման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W\ddot{E}.i. = (n \times N + n1 \times N1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 30 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 416 օր:

$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 30 \times 0.025) \times 416 = 331,9 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,798 \text{ մ}^3/\text{օր:}$

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը 750 մ², (շինհրապարակ, ճանապարհներ)

K1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով՝ 208 (առավելագույնը 208 օր)

$U1 = 750 \times 0.0015 \times 208 = 234 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1,125 \text{ մ}^3/\text{օր:}$

Ելնելով տարածքի կլիմայական պայմաններից, ինչպես նաև անվտանգության կանոններից շահագործման փուլում տարածքի ջրցան չի նախատեսվում:

Օգտագործվող նյութեր. Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ,
- մետաղ՝ ալյումին, պողպատ, պղինձ
- մետաղական կոնստրուկցիաներ,
- մեկուսիչ նյութեր
- բետոն,
- խիճ:

Հաղորդալարերը լինելու են, ալյումին- պողպատ :

Հենասյուների հիմքերի ամրացման և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիաների հիմքերի բետոնացման աշխատանքների, հենասյուների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Տարածքում վառելիքի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շահագործման փուլում բնառեսուրսների՝ ջրի, գազի օգտագործում չի նախատեսվում: Աշխատողների համար ջրամատակարարման համակարգի կառուցում չի նախատեսվում, յուրաքանչյուր աշխատող իր հետ կրեթի իր համար անհրաժեշտ ջուրը՝ շշերով: Գործելու է միայն էլեկտրամատակարարման համակարգը: Արևակայանն ապահովված է լինելու, արտաքին լուսավորության, տեսահսկման սարքավորումներով:

10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

Գործունեության իրականացման ենթակա տարածքը ներառում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքը՝ Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Սաիդներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամասում՝ 7.4 հա տարածք: Նախատեսվում է 8.0ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 9000կՎՏ հզորությամբ 10/08/08 ենթակայանի կառուցում և միացումն իրականացվելու է 220/110/10 կվ «Աշնակ ենթակայանի» 10 կվ լարման N12 պահուստային բջջից՝ օդային գծով:

Արևային ֆոտովոլտային կայանը արևային էլեկտրաէներգիայի լուծումներով էներգիայի ստացման ամենատարածված ձևերից մեկն է: Դրա միջոցով հնարավոր է դառնում արևի էներգիան կերպավորելու էլեկտրական հաստատուն կամ փոփոխական հոսանքի, և ունենալ մատչելի գներով էլեկտրաէներգիայի սպառում:

ՇՄԱԳ շրջանակներում իրականացվել են արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է վեր հանել հնարավոր բոլոր ազդեցությունները, մշակել ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները: Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները:

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Նախատեսվող գործունեության տարածքը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, ենթակառուցվածքների փոփոխություններ չի առաջանալու: Կատարվելու են միայն հողային աշխատանքներ: Տարածքն ի սկզբանե օգտագործվել է որպես արոտավայր, հողային ծածկույթն արդեն իսկ ենթարկվելով էրոզիայի: Այժմ տարածքի հողի նպատակային նշանակությունը փոխվել է՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների:

Գործունեության իրականացման հետևանքով հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն շինարարական աշխատանքների ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Արևակայանի կառուցման շինարարության և շահագործման փուլերում շրջակա

միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու՝

- արևակայանի և ենթակայանի շինարարական աշխատանքների ընթացքում օդային ավազան արտանետումների:
- Ջրային և հողային ռեսուրսների օգտագործման:
- Լանդշաֆտի, Կենդանական և Բուսական աշխարհի փոփոխությունների:
- Շինարարական թափոնների, կայանի աշխատանքի ընթացքում և ապամոնտաժումից հետո առաջացող թափոնների կառավարման:
- Արտակարգ իրավիճակների առաջացման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

10.1. Օդային ավազան.

Շինարարության փուլ: Արագածոտնի մարզն աչքի է ընկնում արևային էներգիայի պոտենցիալով, տարածքը լավագույններից մեկն է արևային էներգիայի տեխնոլոգիաների առումով՝ արեգակնային ֆոտովոլտային տեխնոլոգիաների և արեգակնային ջրատաքացուցիչների կիրառման տեսանկյունից:

Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան լինելու են արտանետումներ ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով: Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /832ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.01	0,18
CH (ածխաջրածիններ)	0,243	0.001	0.001
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.07	1,26
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.012	0,215
Ծծմբային անհիդրիդ		0,0083	0,32
Փոշու անկազմակերպ արտանետում		0,096	0,28

Արևային կայանի համար նախատեսված տարածքը 792 մ հեռու է ամենամոտ

բնակելի տարածքից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ: Շինարարության փուլում Օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլ. Ելնելով գործունեության բնույթից, օդային ավազանի և կլիմայի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

10.2. Ջրային ռեսուրսներ.

Շինարարության փուլ: Համաձայն «Գեոգոն»ՍՊԸ-ի կողմից կատարված ուսումնասիրության՝ ստորգետնյա ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա՝ 70մ-ից խորը հորիզոններում: Գործունեության իրականացման հետևանքով մակերևութային ջրային ռեսուրսների աղտոտում չի կատարվելու, քանի որ տարածքում մակերևութային ջրահոսքերը բացակայում են: Ամենամոտ մակերևութային ջրային ռեսուրսը (վտակ) գտնվում է 637մ հեռավորության վրա: Տարածքին կից՝ մոտ 8մ հեռավորության վրա առկա է չգործող ռոռոգման ջրագիծ:

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի մատակարարման պայմանագիրը կկնքվի գործունեության իրականացման շինարարության փուլում՝ համապատասխան ՋԹ ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ, հստակեցնելով ջրի մատակարարման աղբյուրը:

Կեղտաջրերի հեռացում. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և անիվների լվացումից առաջացած հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի շարժական բիոզուգարան՝ 1,0*1,5 չափերի՝ լվացարանով:

Բիոզուգարանի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանավորված՝ արևային կայանի շինարարության փուլում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխություն չի լինելու, ուստի արևակայանի շինարարության ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

10.3. Հողային ռեսուրսներ.

Շինարարության փուլ: Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման

վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի: Համաձայն «ԳԵՈԶՈՆ» ՄՊԸ կողմից տարածքում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների հաշվետվության՝ գործունեության ենթակա տարածքում հազվադեպ հանդիպում է հողաբուսաշերտ՝ տարբեր բույսերի արմատներ, խճավազ, կավավազ, 0.0-0.2մ հզորությամբ: Մալուխագծի անցկացման տարածքները արևակայանի տարածքներն են, իսկ օդային գծի տարածքներն անցնում են համայնքային հողերով: Արևային կայանի կառուցման շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով:

Արևակայանի, ենթակայանի, մալուխագծերի խրամադրությունների, օդային գծի հենասյունների տեղադրման գործողությունների արդյունքում կատարվելու են 1500մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից հանվող բուսահողի ծավալը կազմելու է 300մ³:

Հանվող հողային գրունտը կազմելու է 1200մ³, որից.

- արևակայանի վահանականների փոստրակների և այլ գործողությունների կատարման արդյունքում կատարվելու են 450մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 385մ³ հողը օգտագործվելու հետլիցքի և տարածքի հարթեցման համար, իսկ մնացած 65մ³ հողային զանգվածը տեղափոխվելու է:
- Ենթակայանի և մալուխագծերի կառուցման ժամանակ, հողային գրունտի փորման արդյունքում հանվելու է մոտ 600մ³ գրունտ, որից 270մ³ հողը օգտագործվելու հետլիցքի և տարածքի հարթեցման համար, իսկ մնացած 330մ³ հողային զանգվածը տեղափոխվելու է:
- Խարսխային հենասյունների, հողանցման աշխատանքների համար հանվելու է 150մ³ ծավալի հողային զանգված, որից 120մ³ կատարվելու է հետլիցք, իսկ մնացած 30մ³ հողային զանգվածը տեղափոխվելու է:

Գործունեության իրականացման հետևանքով կատարվելու է ընդհանուր 1500մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից ընդհանուր բուսահողը կազմելու է 300մ³ : Կատարվող 1200մ³ հողային աշխատանքներից 775մ³-ը պահվելու է տեղում, օգտագործվելու է հարթեցման և բարեկարգման նպատակով բարեկարգման նպատակով, իսկ 425մ³ հողային գրունտը տեղափոխվելու է համայնքի հետ համաձայնեցված վայր՝ տարածքից 600մ հեռավորության վրա: Հանվող բուսահողը պահվելու է տեղում և օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով:

Հողային ռեսուրսները ադտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում են բնապահպանական կառավարման պլանով միջոցառումներ:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում: Արևային մոդուլներով զբաղեցված տարածքում ստեղծվելու է նոր էկոհամակարգ, դադարելու է գերարածեցումը, առաջանալու են ստվերային տարածքներ, առաջանալու է հողի խոնավության նոր ռեժիմ, նկատի ունենալով թվարկված փոփոխությունները, հնարավոր են հողի որակի առավել դրական փոփոխություններ:

10.4. Կենսաբազմազանություն.

Շինարարության փուլ: Արևակայանի և ենթակայանի կառուցման տարածքը ենթադրվում է, որ տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր են՝ հողատեսքը ենթադրվում է: Տարածքն անտառածածկ չէ, բացակայում է ծառափային բուսականությունը, տեղ-տեղ առկա է ոչ լավ զարգացած խոտածածկ: Իսկ խրամուղիների անցկացման հողատարածքները համայնքային գյուղնշանակության հողատեսքեր են՝ արոտավայրեր: Գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, քանի որ գործունեության տարածքն օգտագործվել է որպես արոտավայր:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվել են՝ պայմանավորված կենդանիների շարժունակությամբ:

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների ադմոնիկ մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց նախկին տարածքները:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլում՝ Արևային էլեկտրակայանի կառուցման արդյունքում տարածքի մի մասը ծածկվում է արևային մոդուլներով և ստվերվում է հողի զգալի մասը: Արևային էլեկտրակայանի մոդուլները ստվերում են զբաղեցված տարածքի 30-40 տոկոսը: Մասնակիորեն լուսավորված, ինչպես նաև հողի խոնավության նոր ռեժիմի պայմաններում տարածքում հնարավոր է ստեղծվի բուսական նոր համակեցություն: Գործող արևակայաններում կատարված մոնիթորինգի արդյունքում նկատվել են կենսաբազմազանության փոփոխություններ, վահանակների տակ աճել է բուսածածկ: Ուստի կենսաբազմազանության վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, դրանք առավել քան դրական միտում են ունենալու:

10.5. Թափոններ.

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ աղբի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների՝ գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են 3-5-րդ դասերին:

Առաջանալու է.

- մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ(ծածկագիր՝ 35131200 01 995)՝12կգ, օգտագործման համար

ոչ պիտանի չաղտոտված ալյումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5)՝ 7կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝ 8կգ թափոնների տեսքով:

- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4) 3կգ/տարի:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիր՝ 31401100 08 99 5)՝ 4250 մ³:
- Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից պակաս (4-րդ դաս՝ 31402303 01 03 4)՝ 0,7մ³:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) 3960կգ/տարի քանակով:

Առաջանալու են նաև շարքից դուրս եկած մեկուսիչներ, պարզարանում կեղտաջրերի նստեցման և պարզեցման արդյունքում առաջացած նստվածք/շլամ՝ 94300100 04 00 4/, որոնք կուտակվելու են հատուկ տարաների մեջ, այնուհետև աղբահանություն իրականացնող կազմակերպության կողմից տեղափոխվում և տեղադրվում են աղբավայրում:

Կենցաղային աղբի հաշվարկները.

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է/ըստ ամենաձանրաբեռնված հերթափոխի/,

հետևաբար,

$$M=33*120=3960\text{կգ/տարի}$$

Նախատեսվող գործունեությունը տևելու է 2 տարի, որից բուն շինարարական աշխատանքները տևելու են 20 ամիս կամ մոտ 1.7 տարի, ուստի կենցաղային աղբի տարեկան քանակը կկազմի.

$$3960*1.7=6732\text{կգ/տարի}$$

Թափոնների ճիշտ կառավարման և վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլ. Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի N 430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների հրամանի հնարավոր առաջացող թափոններն են.

- Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված

տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ մոտ 4,0 տ ընդհանուր քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորի յուղի քանակությամբ:

• Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)՝ մոտ 3կգ:

• Ասֆալտի և ասֆալտֆետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4)՝ մոտ 10մ³:

• Յուղերով աղտոտված ավազ (կոշտ՝ յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3)՝ մոտ 1մ³:

Վտանգավոր թափոնները լիցենզավորման ենթակա գործունեություն են համաձայն՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ուստի վերջիններիս գործածությունը պետք է իրականացվի համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

Շահագործման փուլում՝ վթարների կամ վերանորոգման դեպքում թափոնների քանակական գնահատում հնարավոր է կատարել, ելնելով կատարված աշխատանքների փաստացի արդյունքներից: Շահագործման փուլում թափոնների հաշվառումը կատարվելու է թափոնների գոյացման փաստացի ծավալների հիման վրա՝ համաձայն ՀՀ Կառավարության 14 սեպտեմբերի 2006թ N 1343-N որոշման:

Հաշվետվությունում նախատեսվում են թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումներ, որոնց ճիշտ կառավարման արդյունքում վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

10.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտի աշխատակիցների կողմից կատարվել է տարածքի ուսումնասիրություն՝ պատմամշակութային հուշարձանների և հնագիտական շերտերի հայտաբերման նպատակով: Ծրագրի իրականացման ազդեցության գոտում հայտնվող պատմա-մշակութային միավորների բացահայտման և տեղայնացման համար օգտագործվել են Հայաստանի Հանրապետության Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը, իսկ այնուհետև սույն թվականի մարտին, և ապրիլին իրականացվել է տարածքի այցելություն՝ դաշտային-հնագիտական հետազոտություն իրականացնելու նպատակով, քանի որ վերջինիս նախնական ուսումնասիրությունը ի հայտ բերեց խնդրահարույց միավորների առկայություն և կարիք կար պարզելու դրանց բնական կամ արհեստական լինելու հարցը: Տարածքի ընդհանուր ուսումնասիրությունից պարզվեց, որ այստեղ ժամանակին (ամենայն հավանականությամբ խորհրդային շրջանում) էական միջամտություններ են կատարվել բնապատմական լանդշաֆտին, ինչը երևում է քարհավաքների և ծանր տեխնիկայի օգնությամբ հարթեցման իրողություններում Այդ աշխատանքների պատճառով, բնական ժայռային գոյացությունների ելքերի հիմքի երկայնքով ներկայումս տեսանելի պատաշարերի որոշ հատվածներ ամբողջությամբ քայքայվել են, կորցրել իրենց սկզբնական ուրվագիծը և գիտա-ճանաչողական արժեքը: Քարհավաքների իրականացման արդյունք են նաև դամբարանաթմբեր հիշեցնող միավորները, որոնք նույնպես պատմա-մշակութային արժեք չունեն: Մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվել տարածքում անխաթար վիճակում պահպանված ժայռային գոյացությունների ելքերը, որոնց մեջ առկա են ուղղանկյուն և կլորավուն ուրվագծերով կառույցների, քարաշար հատվածների տպավորություն թողնող տեղամասեր: Դրանք բոլորն էլ ունեն բնական ծագում և բազալտահին ապարների

քայքայման, հողմնահարման և լվացման արդյունք են: Տարածքում իրականացված շրջայցի արդյունքում հնագիտական որևէ նյութ չի հայտնաբերվել: Ամփոփելով ներկայացված տեղեկատվությունը կարող ենք նշել, որ ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ գյուղի վարչական սահմաններում «Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային էներգակայան կառուցելու համար նախատեսված ընդհանուրը՝ **7,40 հա** ընդհանուր մակերեսով տարածքի՝ պատմա-մշակութային միավորների վրա հնարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի:

10.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ.

Գործունեության վայրը չի առնչվում՝ վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

10.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարության փուլ: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

- բնական աղետների(երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական երևույթների(քամու ուժեղացում, փոթորիկ),
- հրդեհների առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Համաձայն կատարված «ԳԵՈԶՈՆ»ՍՊԸ-ի ուսումնասիրությունների՝ գործունեության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել կապված.

- հնարավոր հրդեհային իրավիճակների,
- կլիմայական և այլ երևույթների փոփոխության (երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

Արտակարգ իրավիճակների և անվտանգությունն ապահովելու նպատակով տարածքն ապահովված է լինելու հակահրդեհային վահանակներով, օդափոխության և հակահրդեհային համակարգերով, տեսահսկման այլ ազդանշանային սարքերով:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

10.9. Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլ: Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը ցածր է, քանի որ բացակայում են աղմուկ առաջացնող արտադրությունները: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան: Թրթռումների մակարդակը սահմանվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2006թ.մայիսի 17-ի N533-Ն որոշման նորմերով:

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Աշխատատեղերում ավտոմեքենաների և սարքավորումների աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Գործունեության ընթացքում աղմուկ առաջացնող շինտեխնիկայի օգտագործումը սահմանափակ է կամ քիչ հավանական, քանի որ կատարվելու են միայն հողային, բետոնապատման աշխատանքներ:

Աղմուկի մակարդակի նվազեցում			
Անվանումը	Հեռավորությունը	Կանաչապատ գոտի	Աղմուկի մակարդակը հաշվի առնելով հեռավորությունը շենքերից և կանաչապատ գոտին
1. Էկսկավատոր	792 մ – նվազեցումը 78 դԲԱ-ով	նվազեցումը 26 դԲԱ-ով	87-78-26=-17/ դԲԱ
2. Բուլդոզեր	792 մ – նվազեցումը 78 դԲԱ-ով	նվազեցումը 26 դԲԱ-ով	90-78-26=-14/ դԲԱ
3. Բեռնատար	792 մ – նվազեցումը 78 դԲԱ-ով	նվազեցումը 26 դԲԱ-ով	90-78-26=-14/ դԲԱ

Ինչպես երևում է հաշվարկից արևային էլեկտրակայանի շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, աղմուկի մակարդակը չի կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը՝ Դաշտադեմ բնակավայրի

ամենամոտ բնակելի տնից հեռավորությունը կազմում է 792մ: Բացի այդ աղմուկից պաշտպանվող շերտեր են ծառայում ցանկապատը, կանաչ տարածքները: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված տարածքում, որը կմեղմի աղմուկի և թրթռումների մակարդակը: Քանի որ շինարարական սարքավորումներն աշխատելու են միայն ցերեկային ժամերին, հերթականությամբ՝ ցանկապատված շինհրապարակի սահմաններում, ապա աղմուկի մակարդակը չի գերազանցի թույլատրելի նորմերը:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Միաժամանակ համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական, քանի որ արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից բավական հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակչության վրա:

10.10. Էլեկտրական և մագնիսական դաշտ:

Արևակայանը, ենթակայանը նախագծվել են ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան::

Արևային կայանի շինարարությունը և շահագործումը կատարվելու է ոլորտին առնչվող ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի և կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

Նկատի ունենալով բնակավայրերից ունեցած հեռավորությունը բնակավայրերի վրա ազդեցություններ չեն կանխատեսվում:

10.11. Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

/Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն/.

Շինարարության փուլ: Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված հետևյալ ռիսկերի հետ.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ էներգետիկայի, քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,

- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների աշխատանքի անվտանգության և մարդու առողջության հետ կապված հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ, որից խուսափելու համար անհրաժեշտ է աշխատանքի ճիշտ կազմակերպում և աշխատանքի ընթացքում անվտանգության պահպանում:

Շինարարական աշխատանքների ընթացքում մարդու առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է նաև էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ: Մարդու առողջության և անվտանգության համար Պոտենցիալ վտանգ կարող է առաջանալ նաև խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման), հիգիենայի նորմերը չպահպանելու պատճառով: Ուստի շինարարության ամբողջ ընթացքում անհրաժեշտ է ապահովել բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Կայանի կառուցման փուլում պահպանվելու են մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները:

Շահագործման փուլում Արևակայանի, ենթակայանի և օդային գծի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ոլորտին առնչվող ՀՀ օրենքների, կառավարության որոշումների, տեխնիկական կանոնակարգերի, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին համապատասխան:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են միջոցառումներ, ուղղված՝ մարդու առողջության և աշխատանքի անվտանգության պահպանմանը:

10.11. Սոցիալական ազդեցություն.

Շինարարության փուլ: Գործունեությունն իրականացվելու է Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքում՝ Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Սաիդներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամասում:

Գործունեության իրականացումը բնակիչներից հողային տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու: Օդային գծի ուղեգիծը նախագծված է միայն համայնքային հողերի տարածքներով: Նոր ենթակառուցվածքներ չեն նախատեսվում, գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհը:

Նախատեսվող գործունեությունը համահունչ է «Հայաստանի հանրապետության Արագածոտնի մարզի 2017-2025 թվականների ռազմավարական զարգացման ծրագիր»-ի դրույթներին: Համաձայն ծրագրի՝ նախատեսվում է մարզում կարողությունների, արդյունաբերության և այլ ոլորտների զարգացում՝ նորագույն տեխնոլոգիաների

ներդրմամբ, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների խթանման համար վարկային երաշխավորությունների տրամադրում:

Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 33 մարդու համար:

Արևային կայանի կառուցումը նախատեսում է որոշակի սոցիալական ազդեցություններ, կապված.

- Աշխատանքների իրականացման ընթացքում՝ կից գտնվող տարածքների, ճանապարհի հնարավոր խաթարումներ, եթե աշխատանքները կատարվեն անփութորեն և դուրս գան նախատեսվող գործունեության սահմաններից կամ չնախատեսված հանգամանքներում վնասվեն հարակից տարածքները:
- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Դրական սոցիալական ազդեցությունները կապված կլինեն տարածքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծման, նոր աշխատատեղերի բացման հետ:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլում Արևային կայանի կառուցման հետևանքով բացասական սոցիալական ազդեցություններ չեն նախատեսվում:

Լինելու են դրական սոցիալական ազդեցություններ, այն կնպաստի.

- Հայաստանի հանրապետությունում ներմուծվող էներգառեսուրսներից կախվածության նվազմանը, կանաչ էներգիայի զարգացմանը:
- Համայքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծմանը:
- Համայնքային բյուջե նոր վճարումների ավելացմանը:
- Նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- Մարզի և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Շահագործման փուլում մոնիթորինգ իրականացնելու նպատակով ընդգրկվելու են **2-4** աշխատողներ, որոնք աշխատելու են հերթափոխային գրաֆիկով:

Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

Նախաձեռնողը նախատեսում է մասնակցություն ունենալ համայնքի զարգացման ծրագրերին, անհրաժեշտության դեպքում համայնքի բյուջե փոխանցել ֆինանսական միջոցներ, որոնք կնպաստեն համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

10.12. Լանդշաֆտ. Բարեկարգում.

Շինարարության փուլ: «Սուլեյ» ՍՊ ընկերության նախատեսվող Արևակայանը տեղակայվելու է Արագածոտնի մարզի Թալին համայնքի, Դաշտադեմ բնակավայրի վարչական տարածքում, զբաղեցնելու է 7,4 հա տարածք:

Շինարարության փուլում լանդշաֆտի որոշակի փոփոխություններ կառաջանան պայմանավորված հողային աշխատանքներով, որոնք լինելու են ժամանակավոր:

Կայանի կառուցման արդյունքում տեղի կունենա լանդշաֆտի փոքրածավալ փոփոխություն՝ պայմանավորված տարածքում արևային մոդուլների տեղադրումով: Լանդշաֆտի փոփոխությունը տեսանելի չի լինի բնակավայրերից՝ հեռավորության և ռելիեֆի պատճառով: Իսկ ավտոճանապարհներից պատկերների փոփոխությունը էական չի լինի:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

11. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները (Բնապահպանական կառավարման պլան)

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է գնահատման հաշվետվությունում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Նախագծի և բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

11.1. Օդային ավազան.

Շինարարության փուլ: Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով.

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սոբուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սոբուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- ցանկապատել շինարարական հրապարակը՝ համապատասխան նախագծի,

- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

11.2 Հողային ռեսուրսներ.

Շինարարության փուլ: Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

- հողի բերրի շերտի հանում և պահում համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից,

- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին,

- ջրային և հողմնային հողատարումից գերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվելու է խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացվելու է, ծածկվելու է անջրթափանց թաղանթով,

- մալուխագծի և օդային գծի անցկացման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածը կկուտակվի անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում,

- հողային զանգվածի մի մասն օգտագործվելու է տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում, անվաղողերը լվանալուց հետո՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար փովելու է մանրախիճ,

- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կկատարվի այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,

- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,

- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների վրա,

- օդային գծի կառուցման ավարտից հետո՝ անմիջապես իրականացնել համայնքային հողերի վերականգնում,

- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.

- հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ տարածքի ազատ մասերում խոտածածկ հատվածները,

- ՕԳ-ի հենասյունների տեղադրման ավարտից հետո՝ անմիջապես իրականացնել համայնքային հողերի վերականգնում:

11.3 Ջրային ռեսուրսներ.

Շինարարության փուլ: Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շերով),

- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կտեղադրվի ջրի բաք,

- շինհրապարակում կտեղադրվի համապատասխան տարողության պլաստմասե տարա՝ շինարարական հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,

- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- ջրցանի և փոշենստեցման տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,

- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,

- բետոնի լցվածությունը պետք է լինի վերահսկելի՝ ճանապարհներին բետոնանյութի արտհոսքը կանխելու նպատակով

- շինհրապարակը և մեքենաների տեղաշարժը կազմակերպել բացառելով գոյություն ունեցող չգործող ոռոգման համակարգի վնասումը:

Կեղտաջրեր.

- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրվող բիոզուգարան,

- բիոզուգարանի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո այն կհեռացվի կապալառու կազմակերպության կողմից:

Շահագործման փուլ. Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.

- աշխատողների համար խմելու ջուրը բերել պատրաստի վիճակում՝ շշերով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվի սանհանգույց (բիոզուգարան),
- բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

11.4. Կենսաբազմազանություն.

Շինարարության փուլ: Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է.

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել համապատասխան գերատեսչություններին,

- գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,

- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

Շահագործման փուլ. Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.

- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով,

- խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:

11.5. Թափոններ

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,

- նյութերի մնացորդները Կապալառու կազմակերպության կողմից հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխել, անհրաժեշտության դեպքում հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

- մետաղական մասերը հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

- շինարարական թափոնները/մեկուսիչներ, աղտոտված ավազ/ կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- կենցաղային աղբը կհավաքվի աղբահավաք տարողության մեջ և կտեղափոխվի աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,

- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին, կենցաղային աղբը կհավաքվի աղբահավաք տարողության մեջ և կտեղափոխվի աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

Շահագործման փուլ. Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.

- կառուցել 1 հատ 5տոննա տարողության յուղընդունիչ (հոր)՝ տրանսֆորմատորից յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է բետոնապատ՝ խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ,

- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող լիցենզավորված կազմակերպություններին,

- հալոգեններ, դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

- ասֆալտի և ասֆալտբետոնե խառնուրդի մնացորդները հանձնել ասֆալտապատող ընկերություններին,

- յուղերով աղտոտված ավազը հանձնել մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով կամ տեղափոխել աղբավայր,

- սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնել մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված վահանակներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում մոտ 30մ² մակերեսով պահակատան պահեստային հատվածում՝ մինչև համապատասխան

լիցենզավորված կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված վահանակներն ունեն 25 տարվա օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված վահանակները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած վահանակները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ Հայաստանի Հանրապետությունում դրանց վերամշակման հնարավորությունների ստեղծումը, մասնավորապես համապատասխան մասնագիտական կազմակերպությունների ստեղծումը:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակում չի նախատեսվում: Աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ և ամենօր տեղափոխվելու է աշխատողների կողմից:

11.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարության փուլ: Համաձայն ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտի աշխատակիցների կողմից տարածքում կատարված ուսումնասիրությունների տարածքում հուշարձաններ չկան: Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են հուշարձանների կամ հնագիտական շերտի ի հայտ գալու դեպքեր, դրանց պահպանությունն ապահովելու համար, ընկերությունն առաջնորդվելու է պատահական գտածոյի ընթացակարգով:

Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները, տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարությանը:
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից,
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
- հնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազոր մարմնին:

Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը) կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

Այսուհանդերձ, հաշվի առնելով շրջակայքում տեսանելի պատմա-մշակութային միավորների առկայությունը, անհրաժեշտ է խստիվ պահպանել ծրագրի իրականացման սահմանները, հարևան հատվածներում միջամտություններ չկատարել և հեռացված հողի զանգվածներ չկուտակել:

Շինարարության փուլում մեքենաների տեղաշարժը կազմակերպել հուշարձանից հեռու, խստիվ պահպանելով հուշարձանի պահպանման գոտին՝ բացառելով հուշարձանի վնասումը:

Շահագործման փուլում պատմամշակութային հուշարձանների վրա հնարավոր

ազդեցություն չի կանխատեսվում:

11.7. Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները,
- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով,
- Արևակայանի, Էնթակայանի, և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձուլանների պարը, թրթռումը,

Շահագործման փուլ. Արևակայանի և Էնթակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից բավական մեծ հեռավորության վրա, պահպանվում է բնակավայրերից նորմատիվային հեռավորությունը: Ելնելով գործունեության բնույթից աղմուկի և թրթռումների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:

11.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարության փուլ: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով՝ 6 հատ, տեղադրվելու են ջրի բաք,
- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն,
- տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,
- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- ապահովել էլեկտահողորդալարերի բարձր հաղորդականությունը, մեխանիկական ամրությունը,
- հողային աշխատանքեր կատարելուց առաջ անհրաժեշտ է նախօրոք ստանալ ենթակառուցվածքները(կոմունիկացիաները) շահագործող կազմակերպությունների համաձայնությունները,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների

Ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել,

- տարերային երևույթների(քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման սարքերը, ապահովելով վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:

Շահագործման փուլ. արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- արևակայանը և ենթակայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով,

- արևակայանի տարածքում տեղադրվելու են ավտոմատ կառավարման համակարգ, փոխակերպիչներ(ինվենտորներ), տեսահսկման համակարգ՝ 17 հատ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, լուսատուներ՝ 50Վտ հզորությամբ, 1 հատ հրդեհաշիջման վահանակով, 1 հատ հաշվառքի կետում և 1 հատ մուտքի մոտ,

- պարբերաբար ստուգել աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը,

- գործունեության տարածքում փակցնել արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

- պողպատե էլեմենտները պատված են մթնոլորտակայուն էմալով, շինարարական կոնստրուկցիաներն ապահովել հակակոռոզիոն պաշտպանությամբ,

- անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով նախատեսվում է, մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ 2-4 աշխատողի միջոցով:

11.9. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. Շինարարության փուլ:

Գործունեության իրականացման ընթացքում մարդու առողջության և անվտանգության պահպանման, աշխատանքի ճիշտ կազմակերպման համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- շինհրապարակն ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և

պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին,

- մալուխային և օդային գծերի տեղադրումը կատարել, բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,

- շինհրապարակն ապահովվել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառելով մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով,

- իրականացնել տեխնիկական վերահսկողություն՝ նախագծային անհամապատասխանությունները ժամանակին շտկելու նպատակով:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԿ-3-480* նորմերի:

Շահագործման փուլ.

- Արևակայանի, ենթակայանի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան,

- ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ,

- ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից,

- պահպանել լարերի ամենացածր կետից մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը (ջուր, ճանապարհ, հուն)՝ գծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովվելու նպատակով,

- պահպանել էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի (ԷԷՀ ՏԿ) VI գլուխ, 48.3 կետի պահանջը, ապահովելով նախագծվող 10կՎ օդային գծերում, առավելագույն կախվածքի դեպքում, բնակավայրերում և ճանապարհի անցումներում օդային գծի գետնից 7մ բարձրությամբ անցկացնելը,

- էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի,

- ապահովել առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով:

11.10. Սոցիալական գործունեություններ .

Շինարարության փուլ: Գործունեության իրականացման ընթացքում սոցիալական խնդիրներից խուսափելու նպատակով նախատեսվում է.

- բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը,
- աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով,
- օդային գծի անցկացման ժամանակ չխաթարել գյուղացիների գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը,
- համայնքային հողերում փորված տարածքների արագ վերականգնում,
- բացվելու են նոր աշխատատեղեր :

Գործունեության իրականացման շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր:

Շահագործման փուլ.

- բացվելու են նոր աշխատատեղեր՝ 3-4 աշխատողների համար:

Հանրային քննարկումների ընթացքում համայնքի կողմից հարց բարձրացվեց և առաջարկվեց Ձեռնարկողին ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքին: Նախաձեռնողը համայնքապետարանի հետ փոխադարձ համաձայնությամբ ֆինանսական աջակցություն կցուցաբերի համայնքին՝ պայմանագրային հիմունքներով, համայնքի հետ նախապես ճշտելով համայնքային խնդիրների աջակցման ուղղությունները: Նախաձեռնողի կողմից համայնքային բյուջե ներդրումային գումարը կկազմի 5մլն դրամ:

11.11 Բարեկարգում և Լանդշաֆտ.

Շինարարության փուլ: նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,
- հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտման, հարակից տարածքների վնասման, աղտոտմանն ուղղված գործողությունները,
- գործունեության տարածքը մաքրել թափոններից, հնարավորինս վերականգնել լանդշաֆտը:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ

- թափոններից բերելով հնարավորինս նախկին տեսքի,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,
- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,
- արևակայանի և ենթակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է 2մ բարձրության մետաղական ցանկապատով՝ դարպասով:

Արևակայանի տարածքի որոշ հատվածներ բետոնապատվելու կամ լցվելու են մանրախճով: Ելնելով գործունեության բնույթից՝ հրդեհավտանգությունն ապահովելու նպատակով, տարածքի ազատ հատվածներում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվելու:

12. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը. (Մոնիթորինգ).

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է, գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված:

Այդ նպատակով նախատեսվում է.

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն:
- Համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝ շինարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանման նպատակով:
- Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով:
- Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով:
- Տրանսպորտային միջոցների երթևեկության վերահսկում՝ դաշտային տարածքներում վերջիններիս տեղաշարժը վերահսկելու նպատակով:
- Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով:
- Անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով մշտական

մոնիթորինգի իրականացում:

- Շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկողություն:
- Բարեկարգման աշխատանքների իրականացման ապահովում, վերահսկում:
- Կանոնավոր կատարել սոցիալական պարտավորությունները՝ համաձայն համայնքի հետ կնքած պայմանագրի:

Շինարարության ընթացքում ընկերությունը նախատեսում է բնապահպանական միջոցառումների իրականացման համար տրամադրել տարեկան 300000 ՀՀ դրամ:

13. Բնապահպանական կառավարման պլան

Աղյուսակ 10

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	Օդային ավազան	Շինարարության փուլ Օդային ավազան արտանետումները մեղմելու նպատակով նախատեսվում է. - օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս, - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով, - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,	Կապալառու	«Սոլեյ» ՍՊԸ

		- ցանկապատել շինարարական հրապարակը՝ նախագծին համապատասխան, - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով: - շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, պարբերաբար իրականացնել ստուգումներ: Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:		
2.	Հողային ռեսուրսներ	Շինարարության փուլ Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է. - հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան, - բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:	Կապալառու	«Սոլեյ» ՍՊԸ

		- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից, - հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին, - ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվելու է խոտաբույսերով կամ հողաթմբերը ամրացվելու է, ծածկվելու է անջրթափանց թաղանթով, - մալուխագծի, օդային գծի անցկացման ժամանակ հանվող հողային զանգվածը կկուտակվի անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում, - հողային զանգվածի մի մասն օգտագործվելու է տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար, - ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կկատարվի այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր, - շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները, - շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների վրա, - օդային գծի կառուցման ավարտից հետո՝ անմիջապես իրականացնել համայնքային հողերի վերականգնում,		
--	--	--	--	--

		- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում: Շահագործման փուլում հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է. - հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ տարածքի ազատ մասերում խոտածածկ հատվածները, - ՕԳ-ի հենասյունների տեղադրման ավարտից հետո՝ անմիջապես իրականացնել համայնքային հողերի վերականգնում:		
3	Ջրային ռեսուրսներ	Շինարարության փուլ. ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է. - գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար մատակարարել խմելու որակի ջուր՝ բերովի(շերով), - աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կոդեղադրվի ջրի բաք, - շինհրապարակում կտեղադրվի համապատասխան տարողության պլաստմասե տարա՝ շինարարական հոսքաջրերի,	Կապալառու	«Սոլեյ» ՍՊԸ

		անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով, - ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը, - ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության, - պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի : Կեղտաջրեր. - շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից	
--	--	---	--

		առաջացած հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրվող բիոգուգարան, -բիոգուգարանի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլ. Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է. - աշխատողների համար խմելու ջուրը բերել պատրաստի վիճակում՝ շշերով, - աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվի սանհանգույց (բիոգուգարան), - բիոգուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:		
4	Կենսաբազմազանություն	Շինարարության փուլ. Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է. -գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել համապատասխան գերատեսչություններին,	Կապալառու	«Սոլեյ» ՍՊԸ

		- գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով, - շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար: Շահագործման փուլ. Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է. - հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով, - խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:	
--	--	---	--

5	Թափոններ	Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է. - խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից, - նյութերի մնացորդները Կապալառու կազմակերպության կողմից հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխել, անհրաժեշտության դեպքում հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար, - մետաղական մասերը հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար, - շինարարական թափոնները/մեկուսիչներ, աղտոտված ավազ/ կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, - կենցաղային աղբը կհավաքվի աղբահավաք տարողության մեջ և կտեղափոխվի աղբավայր՝	Կապալառու	«Սոլեյ» ՍՊԸ
---	----------	--	-----------	-------------

	համայնքապետարանի համաձայնությամբ, - շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին: Շահագործման փուլ. Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է. - կառուցել յուղընդունիչներ (հոր)՝ տրանսֆորմատորներից յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչները լինելու են բետոնյա հիմքով՝ խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ, - հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող լիցենզավորված կազմակերպություններին, - հալոգեններ, դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է		
--	---	--	--

		մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, - ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնել ասֆալտապատող ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, - յուղերով աղտոտված ավազը հանձնել մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով կամ տեղափոխել աղբավայր, - սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլում առաջացող վնասված վահանակները կուտակվելու են փակ տարածքում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը:		
6	Պատմամշակութային քնության հուշարձաններ.	Լճնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են	Կապալառու	«Սոլեյ» ՍՊԸ

		և տեղեկացվելու է համապատասխան լիազորմարմին: Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը) կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Համապատասխան թույլտվությունները ստանալուց հետո, ընկերությունը խստիվ կպահպանի ծրագրի իրականացման սահմանները, բացառելով հարևան հատվածներում միջամտությունները և հեռացված հողի զանգվածների կուտակումը: Շինարարության փուլում մեքենաների տեղաշարժը կազմակերպել հուշարձանից հեռու, խստիվ պահպանելով հուշարձանի պահպանման գոտին՝ բացառելով հուշարձանի վնասումը:		
7	Աղմուկ և թրթռում	Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է. - շինարարական աշխատանքները, տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և	Կապալառու	«Սոլեյ» ՍՊԸ

		շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում, - պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները, - շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով, - Արևակայանի, ենթակայանի, և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձուլանների պարը, թրթռումը, Շահագործման փուլ. Արևակայանի և ենթակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից բավական մեծ հեռավորության վրա, պահպանվում է բնակավայրերից նորմատիվային հեռավորությունը: Ելնելով գործունեության բնույթից աղմուկի և թրթռումների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:		
8	Արտակարգ իրավիճակներ	Շինարարության փուլ. Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է. - պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն	Կապալառու	«Սոլեյ» ՍՊԸ

		ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, տեղադրվելու են ջրի բաք, - աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն, - տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով, - հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - ապահովել էլեկտահողորդալարերի բարձր հաղորդականությունը, մեխանիկական ամրությունը, - հողային աշխատանքեր կատարելուց առաջ անհրաժեշտ է նախօրոք ստանալ ենթակառուցվածքները/կոմունիկացիաները/ շահագործող կազմակերպությունների համաձայնությունները, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել, - տարերային երևույթների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել		
--	--	---	--	--

	ելեկտրասնուցման սարքերը, ապահովելով վտանգավոր տարածքից մարդկանց տարհանումը: Շահագործման փուլում արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է. - արևակայանն և ենթակայանն ապահովված են լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, - արևակայանի տարածքում տեղադրվելու են փոխակերպիչներ(ինվենտորներ), տեսահսկման համակարգ, 17 հատ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, 1 հատ հրդեհաշիջման վահանակով, 1 հատ հաշվառքի կետում և 1 հատ մուտքի մոտ, - պարբերաբար ստուգել աղետների հակազդելու համակարգերի աշխատունակությունը, - գործունեության տարածքում փակցնել արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝	
--	---	--

		Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, - պողպատե էլեմենտները շինհրապարակ են բերում արդեն ներկված մթնոլորտակայուն էմալով, շինարարական կոնստրուկցիաներն ապահովել հակակոռոզիոն պաշտպանությամբ, - անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով նախատեսվում է, մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով :		
9	Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	Շինարարության փուլ. Մարդու առողջության և անվտանգության պահպանման, աշխատանքի ճիշտ կազմակերպման համար նախատեսվում է. - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - շինհրապարակն ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, - աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները	Կապալառու	«Սոլեյ» ՍՊԸ

	հոգալու համար(տնակ), - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, - հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին, - շինհրապարակն ապահովվել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, - վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառելով մեքենաների կուտակումները, - մալուխային և օդային գծերի տեղադրումը կատարել, բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը, - նվազագույնի հասցնել ճանապարհների		
--	---	--	--

	խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով, - իրականացնել տեխնիկական վերահսկողություն՝ նախագծային անհամապատասխանությունները ժամանակին շտկելու նպատակով: Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆկԿ-3-480* նորմերի: Շահագործման փուլ. - Արևակայանի, ենթակայանի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան, - ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ, - ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից, - պահպանել լարերի ամենացածր կետից մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը (ջուր, ճանապարհ, հուն)՝ գծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների	
--	--	--

		անվտանգությունն ապահովվելու նպատակով, -Էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի, -ապահովել առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով:		
10	Սոցիալական	Շինարարության փուլ. Գործունեության իրականացման ընթացքում սոցիալական խնդիրներից խուսափելու նպատակով նախատեսվում է. - բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը, -աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի են հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, -կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու	Կապալառու	«Սոլեյ» ՍՊԸ

		նպատակով, օդային զծի անցկացման ժամանակ չխաթարել գյուղացիների գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը, - օդային զծի անցկացման ժամանակ չխաթարել գյուղացիների գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը, - համայնքային հողերում փորված տարածքների արագ վերականգնում, - բացվելու են նոր աշխատատեղեր: Շահագործման փուլում բացվելու են նոր աշխատատեղեր՝ 3-4 աշխատողների համար: Նախաձեռնողը ֆինանսական աջակցություն կցուցաբերի համայնքին փոխադրվող համաձայնությամբ՝ պայմանագրային հիմունքներ համայնքի հետ նախապես ճշտելով համայնքախնդիրների աջակցման ուղղությունները:		
11	Լանդշաֆտ, Բարեկարգում .	Տարածքի բարեկարգման նպատակով նախատեսվում է. - բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, Լանդշաֆտային այլ փոփոխությունները, - հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները, - գործունեության տարածքը մաքրել		

		թափոններից, յնարավորինս վերականգնել լանդշաֆտը: Բարեկարգում. - շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից, - տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերելով հնարավորինս նախկին տեսքի, կատարել տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ, - արևակայանի և ենթակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է 2մ բարձրության մետաղական ցանկապատով՝ դարպասով: Ելնելով գործունեության բնույթից՝ հրդեհավտանգությունն ապահովելու նպատակով, տարածքի ազատ հատվածներում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվելու:		
--	--	--	--	--

14. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր)

Աղյուսակ 11

Շինարարության փուլ	Պարբերականությունը (ժամանակամիջոցը)	Մոնիթորինգի եղանակը	Մոնիթորինգի վայրը	Պատասխանատու, Վերահսկող
1. Օդային ավազան արտանետումները մեղմում՝ օդի աղտոտումը	Ամենօրյա, 8 ժամ տևողությամբ:	Տեսողական ուսումնասիրություն, անհրաժեշտության	Շինհրապարակ, գործունեության	Կապալառու

կանխելու նպատակով (փոշի, ծխագազեր)	Ամիսը 1 անգամ	դեպքում չափագրում՝ համապատասխան մասնագետի կողմից	տարածք, հարակից տարածքներ:	
2. Հողային ռեսուրսների մոնիթորինգ՝ հողի աղտոտումը կանխելու նպատակով:	Պարբերաբար	Տեսողական ուսումնասիրությունն եր	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ, հարակից տարածքներ:	Կապալառու «Սոլեյ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության և տեսչական մարմին
3. Կենսաբազմազանության մոնիթորինգ	- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ վերահսկում:			
4. Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում:	- Չպլանավորված ստուգումներ օրվա բոլոր ժամերին	Տեսողական ուսումնասիրությունն եր:	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ:	Կապալառու «Սոլեյ» ՍՊԸ Համապատասխան և գերատեսչության տեսչական մարմին

5. Արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության վերահսկում	Ամենօրյա Պարբերաբար	Տեսողական ուսումնասիրություններ:	Գործունեության տարածքում, շինհրապարակում:	Կապալառու «Սոլեյ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
6 Աղմուկի մակարդակի տատանումներ	Ամենօրյա	Աղմկաչափ	Շինհրապարակում	Կապալառու
7. Մարդու առողջություն և անվտանգություն	Ամենօրյա	Հարցումների իրականացում, համապատասխան ցուցատախտակների տեղադրում:	Շինարարության ընթացքում	Կապալառու «Սոլեյ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
7. Տարածքի բարեկարգում	Շինարարության ավարտից հետո	Տեսողական ուսումնասիրություն:	Գործունեության տարածք, ճանապարհներ	Կապալառու, «Սոլեյ» ՍՊԸ
Շահագործման փուլ				
1. Կենսաբազմազանության ապրելավայրերի և աճելավայրերի Փոփոխությունների վերաբերյալ հսկողություն	Հինգ տարին մեկ անգամ	Մասնագիտական ուսումնասիրություն:	Ենթակա տարածք	«Սոլեյ» ՍՊԸ Համապատասխան մասնագետներ
2. Արտակարգ իրավիճակների հսկողություն՝ վթարային իրավիճակների նվազեցման նպատակով	Համապատասխան հակահրդեհային միջոցների առկայություն: Անվտանգության համակարգերի	Պարբերական Ստուգումներ	Ենթակայանի տարածքում	«Սոլեյ» ՍՊԸ

	սարդյունքների վերահսկում:	Մշտական մոնիթորիգ՝ աշխատողների միջոցով:		
3. Սոցիալական	Գործունեության իրականացման ընթացքում	Անվտանգության գոտու պահպանում: Կանոնավոր կատարել սոցիալական պարտավորություններ ընդհանուր ամրագրված համայնքի հետ կնքված պայմանագրում:	Համայնքային բյուջե	«Սոլեյ» ՍՊԸ Համայնք
4. Թափոնների հաշվառում փաստացի ծավալների հիման վրա:	Համաձայն ՀՀ Կառավարության 14 սեպտեմբերի 2006թ N 1343-N որոշման տարին մեկ անգամ հաճախականությամբ:		Գործունեության տարածք:	«Սոլեյ» ՍՊԸ

15. Հանրային քննարկումներ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի և ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Թալին և Դաշտադեմ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրերում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջարկությունները և դիտողությունները: Հանրությունը համաձայն ընթացակարգի իր կարծիքը և առաջարկությունները կարող է ներկայացնել գրավոր՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Հանրային քննարկմանը ներկա էին համայնքի, գործունեություն իրականացնող ընկերության ներկայացուցիչները, ազդակիր համայնքի բնակիչներ: Հանրային քննարկմանը ներկայացվել է նախատեսվող գործունեության նախագծային լուծումները և գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, դրանց մեղմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

Հաշվետվությունում ներառվել են հանրային քննարկման ընթացքում բարձրացված բոլոր դիտարկումների և հարցադրումների պատասխանները՝ մասնավորապես համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների վերաբերող: Համայնքապետարանի ներկայացուցիչը ներկայացրեց, որ անհրաժեշտ է համայնքում իրականացնել ներդրումներ՝ 5 մլն դրամի չափով, ինչը կնպաստի բնակավայրերի համաչափ զարգացմանը:

Նախագծի վերաբերյալ համայնքի ավագանին որոշում է ընդունել՝ գործունեության իրականացմանը համաձայնություն տրամադրելու վերաբերյալ: Հավելված 6,7:

16. Բողոքների ընթացակարգ

Ընկերությունում կներդրվի բողոքների ուսումնասիրման ընթացակարգ՝ գործունեության իրականացման ընթացքում առաջացած շեղումների. օդային ավազան արտանետումների, հողային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև գյուղացիների հողագործական աշխատանքներին խոչընդոտելու վերաբերյալ բողոքներին ժամանակին արձագանքելու, դրանց պատճառները բացահայտելու և թերությունները վերացնելու նպատակով:

17. Նախատեսվող գործունեության իրականացման նպատակահարմարությունը, հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներում Արևային էներգիան օգտագործվելու է տնտեսության տարբեր բնագավառներում՝ ջեռուցման, լուսավորության, տաք ջրի, ավտոտրանսպորտի, վառելիքի արտադրության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում: Արևային և քամու վերականգնվող էներգիան այսօր աշխարհում էլեկտրաէներգիայի ամենաարագ աճող աղբյուրներն են և տեխնոլոգիապես ավելի առաջադեմ, տնտեսապես մատչելի են: Սա պայմանավորված է մի շարք դրական գործոններով, ինչպիսիք են վառելիքի ծախսերի, ջերմոցային գազերի և այլ աղտոտող թափոնների արտանետումների կրճատումը: 2011 թվականին էներգետիկայի միջազգային գործակալության զեկույցում նշվել է, որ արևային էներգիայի տեխնոլոգիաները, ինչպիսիք են ֆոտոգալվաները, արևային տաք ջուրը և կենտրոնացված արևային էներգիան, կարող են ապահովել աշխարհի էներգիայի մեկ երրորդը մինչև 2060 թվականը, սահմանափակել կլիմայի փոփոխությունը և անցնել վերականգնվող էներգիայի: Արեգակից ստացված էներգիան կարող է առանցքային դեր ունենալ համաշխարհային տնտեսությունը ապաածխաթթվայնացնելու գործընթացում և էներգախնայողության բարելավման ոլորտում:

Համաձայն էներգետիկ Ember վերլուծական կենտրոնի զեկույցի՝ 2022 թվականին քամու և արևի արտադրության աճը ծածկել է էլեկտրաէներգիայի համաշխարհային պահանջարկի աճի 80%-ը: Քամին և արևը 2022 թվականին հասել են համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության ռեկորդային 12%-ի՝ մեկ տարի առաջվա 10%-ի դիմաց:

Արևային էներգիայի օգտագործումը կնպաստի Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ավելացմանը, ապավինելով բնածին, անսպառ և հիմնականում ներմուծումից անկախ՝ ռեսուրսին, կբարձրացնի էներգետիկ համակարգի կայունությունը, կախվածությունը անօդաչուների պաշարներով հարուստ վառելիքից, կնվազեցնի շրջակա միջավայրի աղտոտումը: ՀՀ կառավարությունը խթանում է արևային և այլ այլընտրանքային կայանների կառուցման և հետագա զարգացման ներդրումային ծրագրերը՝ հատկապես չգազիֆիկացված համայնքներում: Արևային էլեկտրաէներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում, թե շրջակա միջավայրի պահպանման, և թե մարդկության կայուն զարգացման համար, հատկապես այն դեպքում երբ հանրապետությունը հարուստ է արևային էներգիայի գոտիներով/ Globalsolaratlas.info/:

Նախատեսվող արևակայանը համահունչ է ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի «ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ 2022-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ, ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ 2022-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԽԼԻ (2022-2024

Մինչև տարածքի հողի օտարումը, սեփականաշնորհումը այլ անձին և ՀՀ կառավարության որոշմամբ հողի նպատակային նշանակության փոփոխությունը, համայնքը, ինչպես նաև համապատասխան գերատեսչությունները/այդ թվում շրջակա միջավայրի նախարարություն/տալիս է իր համաձայնությունը: Գործունեությունը սկսելու և նախագիծ կազմելու համար Նախաձեռնողը դիմում է համայնքին՝ ճարտարապետա-հատակագծային առաջադրանք ստանալու համար, որտեղ ևս դիտարկվում է համայնքի տարածական զարգացման հիմնադրությային փաստաթղթին գործունեության համապատասխանությունը: Բացի այդ Թալին քաղաքում և Դաշտադեմ բնակավայրում իրականացված հանրային քննարկման արդյունքում նախագծի վերաբերյալ համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը, որն էլ հիմնավորում է նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանությունը համայնքի հեռանկարային զարգացման հիմնադրությային փաստաթղթերին, համայնքի հեռանկարային զարգացմանը:

18. Փակման և հետփակման փուլեր.

Ընկերության կողմից գործունեության հնարավոր դադարեցման դեպքում վերջինիս կողմից նախատեսվում են գործողությունների պլան, որը ներառում է.

- ✓ սարքավորումների, արևային վահանակների, էլեկտրասյուների ապամոնտաժում,
- ✓ արևակայանի, ենթակայանի և օդային ուղեգծի տարածքների կարգաբերում, նախկին տեսքի բերում:

Գործողությունները կատարվելու է համայնքի վերահսկողությամբ:

Փակման փուլի ազդեցություն. Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև աշխարհի զարգացած երկրներում, արևային կայանների սարքավորումների, մասնավորապես որպես թափոնատեսակ՝ ֆոտոէլեմենտներ պարունակող վահանակների և այլ ուղեկցող մասերի պահպանման, տեղակայման լուծումները դեռևս ուսումնասիրման փուլում են:

Քանի որ արևային կայանի վահանակները (батаре́йка) պատրաստվում են տարբեր ֆոտոէլեմենտներ պարունակող (ապակի, պլաստիկ) նյութերից, որոնք իրենց մեջ պարունակում են (կապար, քրոմ, կադմիում, սիլիցիում և այլն), ուստի դրանց ուտիլիզացիան և վերամշակումը և տեղափոխումը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության համար հրատապ լուծում պահանջող խնդիր, որի լուծումը պետք է տրվի ՀՀ կառավարության կողմից մշակված համապատասխան օրենսդրության, վերամշակման կամ հավաքման, պահպանման ծրագրի հիման վրա, հաշվի առնելով առաջավոր զարգացած երկրների փորձը:

Միջոցառումներ. Մինչև համապատասխան ռազմավարության մշակումը ընկերությունը նախատեսում է կիրառել հետևյալ հնարավոր տարբերակները.

-հնարավորության դեպքում վերանորոգել և կրկնակի օգտագործել վթարված մասերը,

- ֆոտոէլեմենտներ պարունակող պիտանեղիությունը կորցրած վահանակները չթաղել կամ չհավաքել աղբավայրերում, բաց վիճակում,

- պիտանեղիությունը կորցրած վահանակները վաճառել դրանցով զբաղվող այլ կազմակերպությունների՝ ներառյալ արտասահմանյան զարգացած երկրներին, որոնք ունեն նման ժամկետանց արևային թափոնների վերամշակման տեխնոլոգիաներ,

- ֆոտոէլեմենտներ պարունակող վահանակները հանձնել էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ հավաքող կետերին կամ կազմակերպություններին (նաև արտասահմանյան)՝ կազմակերպված թափոնների հավաքագրման նպատակով,

- թափոնները հանձնել այն երկրների կազմակերպություններին, որոնք զբաղված են արևային վահանակների արտադրությամբ, և որոնցից ձեռք են բերվել ֆոտոէլեկտրոնային արևային վահանակները:

Գործունեության փակման կամ լուծարման նպատակով նախաձեռնողի կողմից կատարվելու է պայմանագրերի երկկողմանի դադարեցում, ապամոնտաժվելու են բոլոր սարքավորումները, վահանակները, էլեկտրահաղորդման հենասյուները, էլեկտրահաղորդման գծերը: Ենթակայանի տարածքում կապամոնտաժվեն տրանսֆորմատորները, յուղահեռացման համակարգերը և այլ սարքավորումները: Ապամոնտաժված պիտանի սարքավորումները, վահանակները կվաճառվեն, իսկ խոտանը(ոչ պիտանի մետաղական մասեր, լարեր և այլն) կտեսակավորվի և կհանձնվի համապատասխան մասնագիտական կազմակերպություններին: Բետոնյա մնացորդները կհանձնվեն ճանապարհաշինարարական ընկերություններին: Տարածքը կբարեկարգվի, կբերվի նախկին տեսքի: Փակման փուլը կիրականացվի համապատասխան նախագծային փաստաթղթերի հիման վրա, ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով: Փակման փուլում առաջացող թափոնների դասկարգման և դրանց լուծումները ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի N 430-Ն, ինչպես նաև N 167-Ն N 166-Ն հրամանների պահանջներով:

Գրականություն

1. Թալին համայնքի 2023-2027թթ. 5-ամյա զարգացման ծրագիր:
2. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀԾՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամաններ:
3. Էներգետիկայի միջազգային գործակալությունը (IEA): Էներգախնայողության ցուցանիշներ. Քաղաքականության շրջանակ, Էդ. IEA, 2014 թ.:
4. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության/այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամաններ:
5. Հայաստանի Հանրապետության Էներգետիկ Էնթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային էլեկտրակայաններ:
6. ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
7. ՀՀԾՆ 22-01-2024թ. «Շինարարական կլիմայաբանություն:
8. ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀԾՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթ:
9. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք /<https://armstat.am/>:
10. <https://energyagency.am/>:
11. Էներգետիկ Ember վերլուծական կենտրոնի զեկույց՝ 2022 թ:

Հավելված 1.

Տարածքի սեփականության իրավունքի վկայականը, պետական ռեգիստրը,



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 23 մայիսի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍՈՒԼԵՅ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արագածոտն, համայնք Թալին գյուղ Դաշտադեմ Սաիդներ դաշտամիջյան փողոց 2 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առավանառքի պայմանագիր 18.05.2023 թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 02-035-0106-0008

Մակերեսի չափը (հա)՝ 7.4

Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 23052023-02-0013, գաղտնաբառ՝ PPEZTXR7HPWR

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 23052023-02-0013, գաղտնաբառ՝ PPEZTXR7HPWR

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ԲԱՂՎԱԾՔ առ 2024-11-08

«ՍՈԼԵՅ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 264.110.1317696

Հիմնադրման տարի 2023

Գրանցման ամսաթիվ 2023-05-16

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրանված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 54051181

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 08255516

Սոցիալական վճարների պարտավորությունների
անձնական հաշվի քարտի համար (Ապահովարի
ծածկագիր) 45717696

Էլ. փոստ soleyenergy@gmail.com

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ԿԻԵՎՅԱՆ Փ. / 18 շ. / 51 բն. ԱՐԱԲԿԻՐ 0028 ԵՐԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս -

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն ԳԱԳԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀՐԱՅՐԻ

Անձնագրային տվյալներ AL0417019 2023-09-05 004

Հասցե ԿԻԵՎՅԱՆ Փ. / Ե / 18 / 51 ԱՐԱԲԿԻՐ 0028 ԵՐԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ



Տեղեկություններ իրավափառության / իրավանքայնության վերաբերյալ

Իրավաձեռքորդ(ներ) գրառված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ 5,000.00

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով	
ԳԱԳԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀՐԱՅՐԻ Անձնագիր հ/հ AL0417019 2023-09-05 տղմ. 004 ի կողմից ՀԾՀ 3905600137 Հասցե՝ ԿԻԵՎՅԱՆ Փ. / Ե / 18 / 51 ՍՐԱԲԻՐ 0028 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2024-02-22	100 %	5000	

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2024-02-20	Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում
2024-02-22	Պաշտոնական կայքի և/կամ էլ-փոստի մասին տվյալների փոփոխություն Մասնակիցների փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն) Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2024-04-19	Իրավաբանական հասցեի փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)
2024-09-05	Պաշտոնական կայքի և/կամ էլ-փոստի մասին տվյալների փոփոխություն
2024-11-08	Պաշտոնական կայքի և/կամ էլ-փոստի մասին տվյալների փոփոխություն

Քաղվածքը տրամադրող՝

ՔՐԻՍՏԻՆԵ ՆԱՂԱԼՅԱՆ

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝

2024-11-08



PM12-D928-14CA-D894		թև N 1-2
		
Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներդրումային հնազանդությունը իրականացվելու են https://www.gov.am կայքում:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)	
	N 11 04.03.2025թ.	
Օբյեկտ Կառուցում, 8 ՄՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանկայան և 9000ԿՎՏ հզորությամբ 10/08/08 ենթակայան,		
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ռամբարգում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)		
(Թանկիճ բնույթումը, հարկայությունը)		
Նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ IV նախագծային փաստաթղթերի մշակման համար:		
(ոլորակային աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և ակն)		
Գտնվելու վայրը՝ Մարզ՝ Արագածոտն, համայնք՝ Թային գյուղ Դաշտադեմ Սահղներ դաշտամիջան փողոց 2 հողամաս, 02-035-0106-0008		
(ձախ, համայնք, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծանցանկը)		
Կառուցակառուցող «ՍՈՒԵՑ» ՍՊԸ / 08255516 / Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԱՐԱՐԿԻՐ, Մ. ՄԱՐԳԱՐՑԱՆ Փ., 6/2 շ., ԲՆ. 52 բն.		
(կառուցակառուցողի անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)		
Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ ԱՆԾԱՐԺ ԳՈՒՑՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԿԱՑԱԿԱՆ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ «ՍՈՒԵՑ» ՍՊԸ 23052023-02-0013		
(կառուցակառուցողի նախագծումը՝ ՀՀ օրենսդրությանը սահմանված կարգով հորանափ տրամադրման, անշարժ գույքի փոխանցման կայանը կառուցողի անհրաժեշտ փաստաթղթերը)		
Առաջադրանքի գործողության ժամկետը մինչև 04.03.2027թ.		
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)		
Ն Ա Ն Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր Ը		
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)		
1. Հողամասը գտնվում է	Դաշտադեմ բնակավայր Սահղներ դաշտամիջան փողոց 2 հաղամաս, Եներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, Եներգետիկայի գործառնական նշանակության	
2. (*) Հողամասի չափսերը	7.4 հա	
3. Հողամասի առկա վիճակը	Չկառուցակառուցված տարածք	
4. (*) Տրանսպորտային պայմանները	Սահղներ դաշտամիջան փողոց	
	(ձառադրանքի անվանումը, երկաթուղային տրանսպորտի ժամկետները և ակն)	

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

6. (*) Կից հողամասեր

7. Քնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

Հողամասին կից առկա գծաինժեներական ենթակառուցվածքներ

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

Մասնավոր և համայնքային սեփականություն

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ հաշվառված ենթակառուցված սխեմայով)

Չկան

(հողարժանի անվանումը)

Չկան

(տեղանքում գործող արտադրամաս, արտադրամիջոցների, ինժեներամատակարարման ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՑԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Հարտարապետահատակագծային պահանջներ

Մշակել Դաշտադեմ բնակավայր Սաիդներ դաշտամիջան փողոց 2 հաղամաս հասցեում 8.00մ-ից հեռավորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի և 9000կՎտ հզորությամբ 10/0.8/0.8կՎ ենթակայանի կառուցման աշխատանքային նախագիծ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 23052023-02-0013 վկայականով ամրագրված տարածքի սահմաններում

(նկերով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ-առնչվող փաստաթղթերի պահանջներով, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներով կամ դրանց քաղաքապետության դեպքում՝ կազմակերպված (կազմակերպող) քաղաքաշինական միջավայրի պահանջներով, առաջարկություններ ճակատների ճակարման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գրանցված լուծումների վերաբերյալ)

9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառուցյի, (կառուցյների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%)

Մինչև 100%

9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.7 այլ պահանջներ

10. Հնդկամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ատորգեմնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

12.1 (*) ջրամատակարարում կույուղի, տաք ջրի մատակարարում

12.2 (*) էլեկտրամատակարարում

12.3. (*) գազամատակարարում

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կույուղու (ներառյալ դիտահորը) տեղադրոցը

12.5. թույլ իտանցներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

14. Բարեկարգում

15. Եինարարական կուլթեր

16. Պաշտպանական կառույցներ

17. Հակահրդեհային պահանջներներ

18. Հաշմանդամների և քնակցության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Շրջակա միջավայրի պահպանում

20. Եինարարության կազմակերպում

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

(Պահանջը թատարակույթ ցանցակառուցվածքում տեղադրված պայմանները)

(Պահանջը թատարակույթ ցանցակառուցվածքում տեղադրված պայմանները)

(Պահանջը թատարակույթ ցանցակառուցվածքում տեղադրված պայմանները)

Պահանջը № 1 հաղցածի 57-րդ կմի 2-րդ հիմնական հատվածում հաշմանդամ տեղադրվող

Ըստ պահանջվող նորմերի

(Ուղղորդված ցանցակառուցվածքում, ըստ նորմերի պահանջները միջոցառումները)

Տարածքի բարեկարգում

(Ելակետային պահանջները պահանջները, կառուցվածքում, հարկարարման փուլի մեծ, ցանցապատմ, փուլեր և այլն)

Տեղական շինարարական կուլթեր

(Զինարարական կուլթերի պահանջները ստանդարտները, ստանդարտները, հարկարարման փուլի մեծ, ցանցապատմ, փուլեր և այլն)

Ըստ պահանջվող նորմերի (Պահանջը թատարակույթ ցանցակառուցվածքում տեղադրված պայմանները)

(Պահանջները ստանդարտները, կառուցվածքում միջոցառումները)

(Ըստ պահանջվող նորմերի (Պահանջը թատարակույթ ցանցակառուցվածքում տեղադրված պայմանները)

(Զինարարական կուլթերի պահանջները ստանդարտները, ստանդարտները, հարկարարման փուլի մեծ, ցանցապատմ, փուլեր և այլն)

մինչև 04.03.2027թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, մշակման առաջադրանքի գործողության ժամկետը և նախադի մշակման փուլերը

Լ Ի Վ Ց ՈՒ Ց Ի Չ Պ Ս Ց Մ Ա Ն Ե Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Պետական համալիր փորձաքննություն

(Զինարարական կուլթերի պահանջները ստանդարտները, ստանդարտները, հարկարարման փուլի մեծ, ցանցապատմ, փուլեր և այլն)

Օրենսդրվ սահմանված կարգով

23. Միջանկյալ համաձայնեցում

24. Հասարակական
քննարկումներ

(իրավաստ մարմնի կամ Հայաստանի Հանրապետության որևէ տարածքում նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ հաշվադրելի նախագծի նախնական համաձայնեցում, եղբրում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

Օրենքով սահմանված կարգով

(Հայաստանի Հանրապետության որևէ տարածքում սահմանված դեպքում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ
Մասնագիտական
եզրակացությունների ստացում

Օրենքով սահմանված կարգով

(ըզվում են տվյալ օրենքի նախնական համաձայնեցում օրենքով սահմանված պահանջների՝ Խոշոր ընտանիքի ու բնության պահպանության և այլ փազրկան մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված ընթացքում իմաստասերական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտատիրոջի) հետ)

26. Փոստային բաժանորդային
պահարանների տեղադրում

(ըզվում են տվյալ օրենքի նախնական համաձայնեցում օրենքով սահմանված պահանջների՝ Խոշոր ընտանիքի ու բնության պահպանության և այլ փազրկան մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված ընթացքում իմաստասերական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտատիրոջի) հետ)

27. Քաղաքաշինական
կանոնադրությամբ ամրագրված
լրացուցիչ պայմաններ

28. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

ՏԱԿՐՈՍ ՍԱՓԵՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ



Էլեկտրական էներգիայի (իզոթրոջան) արտադրության
Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա
ԼԷ № 0793 (7 էջից)

Տրվում է «ՍՈԼԵՅ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությանը՝ մինչև
2046 թվականի սեպտեմբերի 26-ը գործողության
ժամկետով,

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2024 թվականի սեպտեմբերի 25-ի №318-Ա որոշմամբ

Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի նախագահի
պարտականությունները կատարող՝


Ս. Շահինյան

« 25 » սեպտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ – 2024թ.

**«ՍՈԼԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0793
լիցենզիայի**

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (ՎԱՅՐԸ)**

1. Սույն լիցենզիայի ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 26-ից;
2. Սույն լիցենզիան գործում է մինչև 2046 թվականի սեպտեմբերի 26-ը, որից՝
 - 1) մինչև 2026 թվականի սեպտեմբերի 26-ը՝ կառուցման ժամանակահատվածն է,
 - 2) մինչև 2046 թվականի սեպտեմբերի 26-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածը:
3. Սույն լիցենզիայի՝ սույն գլխով նախատեսված ժամանակահատվածի (ժամկետի) երկարաձգման անհրաժեշտության դեպքում «ՍՈԼԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան հայտ է ներկայացնում Հանձնաժողով:
4. Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքն է (գյուղ Դաշտաղեմ):

**2. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

5. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է սույն լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) կառուցել 8000 կՎտ տեղակայվող հզորությամբ «Սոլեյ» արևային էլեկտրակայանը (այսուհետ՝ Կայան), ինչպես նաև իրավունք է տրվում արտադրել էլեկտրական էներգիա՝ առանց «Էներգետիկայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի:

6. Լիցենզավորված անձին, առանց Օրենքով սահմանված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի, իրավունք է տրվում՝

- 1) մեծածախ շուկայում վաճառել կամ արտահանել իր արտադրած էլեկտրական էներգիան (իզոորությունը)՝ շուկայի կանոնների համաձայն,
- 2) էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում գնել էլեկտրական էներգիա (իզոորություն), եթե սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտականությունները:

7. Լիցենզավորված անձն էլեկտրական էներգիան կարող է օգտագործել նաև սեփական կարիքների համար՝ շուկայի կանոնների համաձայն:

8. Կայանի կառուցման ավարտից հետո դրա փաստացի տեղակայված (դրվածքային) իզոորությունը կամրագրվի սույն լիցենզիայում:

9. Կայանի համար հանձնաժողովը սակագին չի սահմանում:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի Օրենքի, այլ օրենքների, սույն լիցենզիայի, ցանցային կանոնների, առևտրային կանոնների, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնների համաձայն էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձի կողմից տրված՝ Կայանից էլեկտրական էներգիայի՝ էլեկտրական ցանց առաքման դադարեցման կամ սահմանափակման վերաբերյալ կարգադրությունները, ինչպես նաև ապահովել Կայանը էլեկտրական ցանցից հեռակառավարման սարքավորման միջոցով անջատելու հնարավորություն:

12. Լիցենզավորված անձի և էլեկտրաէներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց, ինչպես նաև սպառողների միջև կնքված պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին և (կամ) պարտադիր պայմաններին:

13. Լիցենզավորված անձը շուկայի օպերատորի հաշվառմանն է ներկայացնում մեծածախ շուկայում կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի (իզոորության) արտահանում նախատեսող պայմանագրերը՝ համաձայն շուկայի կանոնների:

14. Լիցենզավորված անձի կողմից Կայանի կառուցումը և շահագործումն իրականացվում է համաձայն Կայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմայի՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

15. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2025 թվականի մայիսի 26-ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով: Եթե օրենսդրությամբ առկա չէ Կայանի նախագծային աշխատանքներ իրականացնելու պահանջ՝ ապա Հանձնաժողով է ներկայացվում իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան հիմնավորումներ:

16. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև սույն լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը:

17. Լիցենզավորված անձը (10 ՄՎտ և ավելի տեղակայված հզորությամբ Կայանների դեպքում) պարտավոր է կատարել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի հրահանգները՝ համաձայն ցանցային կանոնների:

18. Սույն լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, իսկ դրանով ամրագրված էլեկտրական էներգիայի արտադրության գործառույթը որևէ ձևով փոխանցվել այլ անձի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

19. Սույն լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ և այդ գործունեության մեջ ներգրավված գույքի հասանելիությունը Հանձնաժողովի ներկայացուցիչների համար:

21. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի սույն լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը, իսկ լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն, ինչպես նաև պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին 10 օրվա ընթացքում, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված անձի և շուկայի մասնակիցների կողմից միմյանց, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացվող տեղեկությունը (փաստաթուղթը) հրապարակային է, եթե այն օրենքի համաձայն չի համարվում գաղտնի:

26. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են սույն լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող են դառնալ սույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ:

27. Սույն լիցենզիայի պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՒՄԸ

28. Լիցենզավորված գործունեության վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

29. Հանձնաժողովը օրենքներով և դրանց հիման վրա ընդունված՝ իր իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով, Լիցենզավորված անձի գործունեությունը Օրենքին, Հանձնաժողովի իրավական ակտերին և լիցենզիայի պայմաններին համապատասխանության ստուգման, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և տեղեկատվության հավաստիության, գնահատման համար իրականացնում է Լիցենզավորված անձի գործունեության մոնիտորինգ:

30. Հանձնաժողովի ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք՝ Հանձնաժողովի սահմանած կարգով:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

31. Լիցենզավորված անձի կողմից Օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառելու Օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, վերականգնելու մինչև խախտումը եղած դրույթունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնահատկությունները:

32. Լիցենզավորված անձը սույն լիցենզիայի պայմանների 31-րդ կետում նշված խախտումների համար պատասխանատվություն չի կրում, եթե դրանք հետևանք են ֆորս մաժորի:

33. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են Օրենքով և օրենսդրությամբ:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

34. Սույն լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

35. Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:

36. Լիցենզավորված անձի վերականգնակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15 օրյա ժամկետում լիցենզիայի վերաձևակերպման հայտ ներկայացնել Հանձնաժողով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

37. Սույն լիցենզիայի պայմաններում հասկացություններն ունեն Օրենքով և շուկայի կանոններով սահմանված նշանակությունը:

«ՍՈԼԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

(ընկերության անվանումը)

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան Կիևյան փողոց., 18 շենք,

51 բնակարան,

(գտնվելու վայրը)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՐԱՐ՝



Ա. ԱՃԱՐՅԱՆ

Հավելված 4

«ՀԷՑ»ՓԲԸ-ի տեխնիկական պայմանը

«ՀԱՄԱՁԱՅՆՆԵՑՎԱԾ Է» ՀՀ «ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՐԸ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ԾԱՌԱՅԱՐԱԳԵՏ Գ. ԲԱԼՅԱՆ « 12 » 12 2024թ.	«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ» «ԲԱՐՁՐԱՎՈՐՆԵՐ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱԳԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ « 09 » 12 2024թ.
--	---

ՀԱՐՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հայտատու՝ «ՍՈՒԼԵՅ» ՍՊԸ

գործունեությունը՝ էլեկտրաէներգիայի արտադրություն

կայանի տեսակը՝ Արևային ֆոտովոլտային

կայանի անվանումը՝ «ՍՈՒԼԵՅ»

գործունեության վայրը՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Դաշտաղեմ բնակավայր, Սաիդներ դաշտամիջան փողոց, թիվ 2 հողամաս

միացման կետը՝ 220/110/10 կՎ «Աշնակ» ենթակայանի 10 կՎ ՓԲՍ

միացման կետի լարումը՝ 10 կՎ

միացվող հզորությունը՝ 8,0 ՄՎտ

2. Արևային ֆոտովոլտային 8,0 ՄՎտ հզորության կայանի միացումն իրականացնել 220/110/10 կՎ «Աշնակ» ենթակայանի 10 կՎ լարման N 12 պահուստային քջից՝ մալուխային միացմամբ:

3. Արևային կայանի միացման նախագիծը համաձայնեցնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերությունների հետ:

4. Արևային կայանում նախատեսվող կառավարման և հակավթարային ավտոմատիկայի սկզբունքները համաձայնեցնել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության հետ:

5. Արևային կայանում նախատեսվող հաստատուն հոսանքի փոխակերպիչ սարքավորման հիմնական պարամետրերը պետք է նախապես համաձայնեցնել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության հետ:

6. Նախատեսել և գործարկել հաճախականության բարձրացումից բաժանարար ավտոմատիկա, որի դրվածքները նոր միացվող յուրաքանչյուր կայանի համար պետք է հաշվարկվեն և տրամադրվեն «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության կողմից:

7. 220/110/10 կՎ «Աշնակ» ենթակայանի 10 կՎ N 12 քջի վրա տեղադրել էլեկտրաէներգիայի երկկողմանի հաշվառման հաշվիչ և միացնել էՀԱՀ-ի հետ:

8. Ապահովել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 522-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ էլեկտրաէներգետիկական

շուկայի հաղորդման ցանցային կանոններ»-ի գլուխ 31-ի 204-րդ կետի 4.1 ենթակետի պահանջի կատարումը՝ կայանում տեղադրել Համակարգի օպերատորի համար կայանը հեռակառավարման սարքավորման միջոցով էլեկտրական ցանցից անջատման հնարավորություն:

9. Նախագիծն իրականացնել «էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոններ»-ի և ՀՀ-ում գործող շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

10. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից ստանալ էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն:


11. Տեխնիկական պայմանները ուժի մեջ է ընկերության կողմից վավերացված Միացման պայմանագիրը հայտատուին փոխանցելու պահից հետո 6 (վեց) ամիս:


Գլխավոր ճարտարագետի տեղակալ



Ս. Իգիտբաշյան

Տարածքի հատակագիծը, Մալուխագծի, օդային զծի հենասյունների հատակագիծ՝ WGS կոորդինատներով,





10ԿՎ ՕԳ-ի ուղեգծի
Հենարանի և առանցքի կորդինատները

Հենարանի հերթական համար	Հենարանի առանցքի կորդինատները ArmWGS համակարգում	
	Y	X
	(մետր)	(մետր)
1	8404 344.9033	4469 327.6976
2	8404 286.3787	4469 417.2759
3	8404 282.6328	4469 527.2103
4	8404 278.8868	4469 637.1465
5	8404 275.1408	4469 747.0827
6	8404 271.7867	4469 845.5165
7	8404 268.0406	4469 995.4582
8	8404 227.3079	4470 078.1734
9	8404 192.6582	4470 182.5802
10	8404 097.4518	4470 242.0475
11	8404 070.7243	4470 359.0470
12	8404 047.1477	4470 462.2422
13	8404 020.4219	4470 579.2282
14	8403 997.0368	4470 681.5910
15	8403 971.4246	4470 793.7026
16	8403 943.3625	4470 919.5379
17	8403 917.7492	4471 028.6484
18	8403 908.3952	4471 069.5935
19	8403 886.1263	4471 167.0761
20	8403 864.5204	4471 261.6456
21	8403 844.4760	4471 349.3851
22	8403 825.7689	4471 431.2764
23	8403 811.9625	4471 491.7093
24	8403 754.2446	4471 521.6030
25	8403 687.6525	4471 556.0926

Հավելված 6.

Մշակույթի կարծիքը

ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեն գյուղի վարչական սահմաններում «Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված տարածքում ծրագրի իրականացման արդյունքում հնագիտական և պատմա-մշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցության գնահատական-եզրակացություն

Հայաստանը չափազանց հարուստ մշակութային ժառանգություն ունեցող երկիր է, որի ակունքները ձգվում են դեպի հազարամյակների խորքերը: Այստեղ հայտնի են շուրջ 33 000 պատմության և մշակույթի հուշարձաններ, ներկայացված 4500 առանձին համալիրներով, որոնք զբաղեցնում են մոտ 20 000 հեկտար ընդհանուր տարածք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հուշարձանները պաշտպանված են օրենքով և բաժանվում են տեղական և հանրապետական նշանակության: Դրանց մեջ հատկապես առանձնանում են թվով 80 համալիրներ, որոնք ունեն կարևորագույն պատմական, ճարտարապետական, գիտական, արվեստագիտական և մշակութային բացառիկ արժեք (ընդգրկում են մոտ 400 ճարտարապետական հուշարձաններ): Ոչ վաղ անցյալում դրանք ընդգրկված էին ԽՍՀՄ համամյութենական մշակութային և պատմական արժեք ներկայացնող հուշարձանների ցուցակում: Ներկայումս, ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակը, որը, սկսած 1963 թ. համալրվել է առավելքան 630 պատմական հուշարձաններով և բնության տարածքներով ամբողջ աշխարհում, ներառում է նաև Հայաստանի տարածքի որոշ հուշարձաններ: Դրանց շարքում են Հաղպատի վանական համալիրը, Սանահնի վանական համալիրը և միջնադարյան կամուրջը, Էջմիածինն իր բազմաթիվ հուշարձաններով, Զվարթնոցի տաճարը, Գեղարդավանքի համալիրը և Ազատ գետի վերին հատվածը: Հայաստանի տարածքի այլ հուշարձաններ ևս նախապատրաստվում են ընդգրկվելու ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցուցակներում, որոնք են՝ Նորավանքի վանական համալիրը, պարսկական Կապույտ մզկիթը և միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը: Այդ պատճառով մշակութային ժառանգության գնահատումը և կառավարումը նման ծրագրերի իրականացման տարածքի համար գերակա խնդիր է և պահանջում է հնագետի փորձագիտական եզրակացություն: Հնագիտական փորձագիտության խնդիրներն են.

1. Բացահայտել ծրագրի իրականացման հնարավոր ազդեցությունները նյութական

մշակույթի սկզբնաղբյուրների վրա, որոնք են շարժական և անշարժ հուշարձանները, հնավայրերը, կառուցվածքները և լանդշաֆտները, որոնք ունեն, հնագիտական, հնէաբանական, պատմական, ճարտարապետական, կրոնական, գեղագիտական կամ մշակութային նշանակություն;

2. Պատրաստել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության հնագիտական բաղկացուցիչը՝ ներառյալ կառավարման պլանը (ԿՊ-ն), որոնք երկուսն էլ կնախապատրաստվեն ծրագիրը իրականացնող մարմնի (ԻՄ) աջակցությամբ, որն է «Նովալ» ՍՊԸ -ն:

3. Կազմակերպել նախնական և դաշտային հետազոտություններ նախագծի իրականացման տարածքում առկա հնագիտական հուշարձանների համար, տեղորոշել և բնորոշել հայտնի և նոր հայտնաբերված հնավայրերը, հանդես գալ որոշակի առաջարկներով՝ կապված հուշարձանների վրա ազդեցության մեղմացման միջոցառումների մշակման հետ, որոնք պետք է արտացոլվեն ՇՄԱԳ հաշվետվության մեջ և ԿՊ-ում: Ներկայացվող ՇՄԱԳ հաշվետվության մեջ ուսումնասիրված միավորները պետք է բաժանվեն երկու խմբի՝ հուշարձաններ, որոնք կրում են ծրագրի իրականացման անմիջական ազդեցությունը և հուշարձաններ, որոնք չեն ազդվում ուղղակիորեն կամ ազդվում են անուղղակիորեն: Բոլոր ազդվող հուշարձանների համար ծրագրի իրականացումից առաջ պետք է ներկայացվեն որոշակի եզրակացություններ, որոնք հնարավորություն կտան գնահատել նախագծի բացասական ազդեցությունը մշակութային միավորների և նրանց պատմա-աշխարհագրական միջավայրի վրա:

«Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից 800 կՎտ հզորությամբ արևային էներգակայան հիմնելու և 900 կՎտ հզորությամբ ենթակայանի կառուցման համար նախատեսված տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է **7,40 հա** (հողատարածքի կադաստրային ծածկագիրը 02-035-0106-0008): Հայցվող տարածքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ գյուղի վարչական սահմաններում, նրանից մոտ 700 մ արևելք-հյուսիս-արևելք (**Քարտեզներ 1-1ա և 2-2ա**):

Երկրաբանական և երկրաձևաբանական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը ընդարձակ Թալին-Կարմրաշենի սարահարթի մասն է կազմում, որը հարում է Արարատյան գոգավորությանը և բացվում դեպի Արաքս գետի հովիտը: Արագած ստրատոհրաբուխը, Արտենի լեռը, Դոմասարը և այլ ժայթքման կենտրոններ տեսանելի են այստեղից: Տեղական

մորֆոլոգիան ներկայացված է բարձր և ցածր բլրաշարերով, որոնք հատուկ են կենտրոնական Հայաստանի նախալեռնային գոտու համար, ինչպես նաև ոչ խորը ձորերով, կտրված ժամանակակից սեզոնային ջրային հոսքերով, որոնք ձնհալի ջրերի տեղափոխման արդյունք են: Դրանք հիմնականում առաջացել են ուշ պլեյստոցենի և վաղ հոլոցենի դարաշրջանների կլիմայական ցիկլերի ընթացքում և վերջիններիս զարգացումը շարունակվում է նաև մեր օրերում: Ընդհանուր առմամբ՝ նշված ոչ մեծ ջրային մարմինները, լանջերի ինտենսիվ հողմնահարման ենթարկված բլուրների և ապարների մակերևույթների հետ միասին կարևորագույն դերակատարում են ունեցել տեղական պատմա-մշակութային ժառանգության լանդշաֆտի ձևավորման և զարգացման գործընթացում, արտահայտելով դրա շահագործման և կենսաապահովման ինքնուրույն ձևեր: Դրանք նաև ծառայել են որպես յուրահատուկ շինանյութի աղբյուր, ինչպիսիք են հրաբխային տուֆը, բազալտների և դալիտների տարատեսակները, որոնք հնարավորություն են ընձեռնել համատեղելու արհեստական շինություններն ու բնական ձևերը, ստեղծել որսադարաններ, աշտարակներ, ներփակված տարածքներ կամ կառույցներ, դամբարանաբլուրներ և այլ ծիսական էլեմենտներ:

Ծրագրի իրականացման ազդեցության գոտում հայտնվող պատմա-մշակութային միավորների բացահայտման և տեղայնացման համար սկզբնական փուլում օգտվել ենք Հայաստանի Հանրապետության Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Արագածոտնի մարզ (տե՛ս **Հավելված Հայաստանի Հանրապետության կառավարություն 2002 թվականի հունվարի 24-ի №65 որոշման**) փաստաթղթից, որտեղ Դաշտադեմ բնակավայրում 2.35. դասիչի տակ ներառված է 12 հուշարձան, որոնք են 10-17-րդ դդ. ամրոցը (դասիչ 2.35.1.), 10-13-րդ դդ. գերեզմանոցը (դասիչ 2.35.2.), 12-14-րդ դդ. գերեզմանոցը (դասիչ 2.35.3.), 12-14-րդ դդ. երկրորդ գերեզմանոցը (դասիչ 2.35.4.), 12-16-րդ դդ. գերեզմանոցը (դասիչ 2.35.5.), 14-15-րդ դդ. գերեզմանոցը (դասիչ 2.35.6.), 16-17-րդ դդ. գերեզմանոցը (դասիչ 2.35.7.), 7-18-րդ դդ. «Քաղենի» գյուղատեղին (դասիչ 2.35.8.), Ք.ա. **21** հազ. դամբարանադաշտը (դասիչ 2.35.9.), ս. Քրիստափոր եկեղեցու **7-20**րդ դդ. համալիրը (դասիչ 2.35.10.), 9-10-րդ դդ. խաչքարը (դասիչ 2.35.11.) և 11-12-րդ դդ. խաչքարը (դասիչ 2.35.12.): Թվարկված միավորները հեռու են գտնվում ծրագրի իրականացման տարածքից և որևէ ազդեցություն կրել չեն կարող:

Սակայն, բացի ցուցակներում ներառված հուշարձանները, անհրաժեշտ է

տեղայնացնել տարբեր արշավախմբերի ուսումնասիրության շնորհիվ հայտնաբերված հնավայրերը, որոնք դուս ընդգրկված չեն հուշարձանների պետական ցանկում, ունեն կամ չունեն նորահայտ հուշարձանի կարգավիճակ, սակայն անկախ դրանից, ենթակա են պահպանման պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքի Հոդված 20-ով. *Նորահայտ հուշարձանների պահպանության և անվթարության ապահովումը, որը սահմանում է՝ պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող նոր հայտնաբերված կամ նոր արժեքավորված օբյեկտն ստանում է նորահայտ հուշարձանի կարգավիճակ և պահպանվում է մինչև հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նորահայտ հուշարձանը տնօրինող իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել դրա անվթարությունը, իսկ պետության կողմից այն վերցնելու դեպքում սեփականատիրոջ կրած վնասը փոխհատուցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Հուշարձանի հայտնաբերման փաստը թաքցնող, այն հաշվառելու և ուսումնասիրելու համար արգելքներ ստեղծող, ինչպես նաև գտածոները ոչնչացնող կամ յուրացնող անձը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:*

Դաշտադեմի վարչական տարածքում՝ դեռևս 1989-1990 թթ. պեղման աշխատանքներ է իրականացրել Երևանի համալսարանի լաբորատորիայի հնագիտական արշավախումբը՝ հնագետ Ե. Ասատրյանի ղեկավարությամբ, որի ընթացքում ուսումնասիրության է ենթարկվել Դաշտադեմի ամրոցը: 2015 թ. ամրոցում պեղումները վերսկսվել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից՝ (աժշավախմբի ղեկավար՝ Ա. Բաբաջանյան), որոնք ստացել են սիստեմատիկ բնույթ: Բացի բուն ամրոցի պեղումները՝ արշավախմբի կողմից մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել ամրոցի շրջակա տարածքները, ճշգրտվել և վերափաստագրվել են անշարժ հուշարձանների ցուցակներում առկա միավորները, փաստագրվել նորերը: Համանման ուսումնասիրություն է իրականացվել նաև 2021-2023 թթ.՝ 200 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար ՀՀ կառավարության կոմից նախաձեռնված ծրագրի շրջանակներում, որի մի հատվածը բաժին է ընկել Դաշտադեմ համայնքին (տե՛ս համապատասխան հաշվետվությունը): Դատելով այս ուսումնասիրությունների արդյունքներից, վերը նշված հատվածը ամենաինտենսիվ մոդիֆիկացված լանդշաֆտներից մեկն է, որը հայտնի է

Արագած լեռան հարավային լանջերին: Այն ներկայացված է այսպես կոչված անապատի քայթերի կամ որսադարանների շղթաներով (կառույցներ, որոնք ստեղծվել են որսի, դարանելու, կենդանիների բազմացնելու և ծխական նպատակներով) և ուղեկցվում են աջակցող ներփակված տարածքներով, ինչպես նաև ագլոմերատիվ (մեդուզա, անիվ, բջիջ) և կորալային բնակատեղիներով, աշտարակներով ու դամբարանադաշտերով: Սույն մշակութային լանդշաֆտները ձևավորվել են հազարամյակների ընթացքում (առնվազն ստորին պալեոլիթից մինչև երկաթի դար), ապա, ինտենսիվորեն շահագործվել միջնադարում՝ ծառայելով որպես այգիներ և գինու արտադրության համար նախատեսված կառույցներ: Նույն լանդշաֆտները շահագործվել են նաև խորհրդային դարաշրջանի մարդկանց կողմից՝ գյուղատնտեսական նպատակներով: Ընդհանուր առմամբ, ուշ փուլերը (միջնադարյան և խորհրդային) պահպանել են նախորդ փուլերի քարաշեն կառույցների մի սովոր մասը: Գործնականում, վերջին տարիների հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանը և Հայկական լեռնաշխարհը հաղիսանում է հնագույն որսորդական տնտեսության և կենդանիների ընտելացման կարևորագույն օջախներից մեկը՝ այսպես կոչված անապատային որսադարան-քայթերի «նախահայրենիքն ու մայրաքաղաքը»՝ և դրանց խտությունն ու քանակը ուսումնասիրվող տարածքում աննախադեպ է:

Այդ իսկ պատճառով, ս.թ. մարտի 11-ին, 22-ին, ինչպես նաև ապրիլի 5-ին իրականացվել է տարածքի այցելություն՝ դաշտային-հնագիտական հետազոտություն իրականացնելու նպատակով, քանի որ վերջինիս նախնական ուսումնասիրությունը ի հայտ բերեց խնդրահարույց միավորների առկայություն և կարիք կար պարզելու դրանց բնական կամ արհեստական լինելու հարցը: Տարածքի ընդհանուր ուսումնասիրությունից պարզվեց, որ այստեղ ժամանակաին (ամենայն հավանականությամբ խորհրդային շրջանում) էական միջամտություններ են կատարվել բնապատմական լանդշաֆտին, ինչը երևում է քարհավաքների և ծանր տեխնիկայի օգնությամբ հարթեցման իրողություններում (**Լուսանկարներ 3-4, 11, 16-18**): Այդ աշխատանքների պատշառով, բնական ժայռային գոյացությունների ելքերի հիմքի երկայնքով ներկայումս տեսանելի պատաշարերի որոշ հատվածներ ամբողջությամբ քայքայվել են, կորցրել իրենց սկզբնական ուրվագիծը և գիտա-ճանաչողական արժեքը (**Լուսանկարներ 1-3, 9-10, 12, 18**): Վերջիններս, հավանաբար, վերը նշված քայթ-որսադարանների կամ անասնապահական բնույթի ներփակված տարածքների

քայքայված մնացորդներ են: Քարհավաքների իրականացման արդյունք են նաև դամբարանաթմբեր հիշեցնող միավորները, որոնք նույնպես պատմա-մշակութային արժեք չունեն (**Լուսանկարներ 5-6**): Եվ վերջապես, մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվել տարածքում անխաթար վիճակում պահպանված ժայռային գոյացությունների ելքերը, որոնց մեջ առկա են ուղղանկյուն և կլորավուն ուրվագծերով կառույցների, քարաշար հատվածների տպավորություն թողնող տեղամասեր: Դրանք բոլորն էլ ունեն բնական ծագում և բազալտահին ապարների քայքայման, հողմնահարման և լվացման արդյունք են (**Լուսանկարներ 1-2, 8, 14-15**): Տարածքում իրականացված շրջայցի արդյունքում հնագիտական որևէ նյութ չի հայտնաբերվել:

Ամփոփելով ներկայացված տեղեկատվությունը կարող ենք նշել, որ ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ գյուղի վարչական սահմաններում «Սուլեյ» ՄՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային էներգակայան կառուցելու համար նախատեսված ընդհանուրը՝ **7,40 հա** ընդհանուր մակերեսով տարածքի՝ պատմա-մշակութային միավորների վրա հնաարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի: Այսուհանդերձ, հաշվի առնելով շրջակայքում տեսանելի պատմա-մշակութային միավորների առկայությունը (**Լուսանկարներ 19-20**), անհրաժեշտ է ծրագիրն իրականացնող կազմակերպության առաջ պահանջ դնել՝ խստիվ պահպանել ծրագրի իրականացման սահմանները, հարևան հատվածներում միջամտություններ չկատարել և հեռացված հողի զանգվածներ չկուտակել:

Բորիս Գասպարյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
Ինստիտուտ, Վաղ Հնագիտության բաժնի
Գիտաշխատող



Հայկ Հայդուսյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
Ինստիտուտ, Վաղ Հնագիտության
Կրտսեր գիտաշխատող




բաժնի



14.04.2025 թ.

Օգտագործված գրականության ցանկ


1. Պետական ցուցակ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների՝ Արագածոտնի մարզ, Հավելված Հայաստանի Հանրապետության կառավարություն 2002 թվականի հունվարի 24-ի №65 որոշման,
2. Геология Армянской ССР, т. I, Геоморфология, Ответственный редактор Н.В. Думитрашко, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1962;
3. Геология Армянской ССР, т. II, Стратиграфия, Ответственный редактор К.Н. Паффенгольц, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1964;
4. Паничкина М.З., 1950, Палеолит Армении, Редактор А.А. Инессе, Издательство Государственного Эрмитажа, Ленинград, 1950;
5. Сардарян С.А., 1954, Палеолит в Армении, Ответственный редактор М.С. Асратян, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1954;
6. Սարգսյան Ս.Հ., 1967, Նախնադարյան Հասարակությունը Հայաստանում, խմբագիր՝ Մ.Ա. Իսրայելյան, «Միտք» հրատարակչություն, Երևան, 1967:
7. Ասատրյան Ե., 2004, Թալինի շրջանի հուշարձանները, խմբագիր՝ Կ. Զորյան, «Հուշարձան» հրատարակչություն, Երևան, 2004 :
8. Badalyan R.S. and Avetisyan P.S., 2007, Bronze and Iron Age Archaeological Sites of Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region, BAR International Series 1697, Archaeopress, Oxford, 2007.



Թալին համայնքի Դաշտաղեն գյուղի վարչական սահմաններում գտնվող «Մոլեյ» ՍՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված՝ 7,40 հա ընդհանուր մակերեսով տարածքի տեղադիրքը



Թալին համայնքի Դաշտադեն գյուղի վարչական սահմաններում գտնվող «Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված՝ 7,40 հա ընդհանուր մակերեսով տարածքի տեղադիրքը



Թալին համայնքի Դաշտադեմ գյուղի վարչական սահմաններում գտնվող «Սուլեյ» ՍՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված՝ 7,40 հա ընդհանուր մակերեսով տարածքը

Քարտեզ 2ա



Թալին համայնքի Դաշտադեմ գյուղի վարչական սահմաններում գտնվող «Սուլեյ» ՍՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված՝ 7,40 հա ընդհանուր մակերեսով տարածքը



Լուսանկար 1. «Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հարավ-արևելյան հատվածը (օդային լուսանկար)



Լուսանկար 2. «Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հարավային հատվածը (օդային լուսանկար)



Լուսանկար 3. «Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հարավային հատվածում՝ ժամանակին իրականացված քարհավաք (օդային լուսանկար)



Լուսանկար 4. «Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հարավային հատվածում՝ ժամանակին իրականացված քարհավաքի վերջավորությունը (օդային լուսանկար)



Լուսանկար 5. «Սոլեյ» ՄՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հարավ-արևելյան հատվածում՝ ժամանակին իրականացված քարհավաքի արդյունքում առաջացած՝ դամբարան հիշեցնող միավոր (օդային լուսանկար)



Լուսանկար 6. «Սոլեյ» ՄՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հարավ-արևելյան հատվածում՝ ժամանակին իրականացված քարհավաքի արդյունքում առաջացած՝ դամբարան հիշեցնող միավոր (օդային լուսանկար)



Լուսանկար 7. «Մոլեյ» ՄՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի արևմտյան հատվածը



Լուսանկար 8. «Մոլեյ» ՄՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի արևմտյան հատվածի ժայռային բնական ելքերը (օդային լուսանկար)



Լուսանկար 9. «Սուլեյ» ՄՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի արևմտյան հատվածի ժայռային ելքերի հարավ-արևելյան կողմում՝ պատաշար հիշեցնող տեղամաս (օդային լուսանկար)



Լուսանկար 10. «Սուլեյ» ՄՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի կենտրոնական հատվածը (օդային լուսանկար)



Լուսանկար 11. «Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի կենտրոնական հատվածում՝ ժամանակին իրականացված քարհավաք (օդային լուսանկար)



Լուսանկար 12. «Սոլեյ» ՍՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի կենտրոնական հատվածի ժայռային ելքերի հարավային կողմով անցնող՝ պատաշար հիշեցնող տեղամաս (օդային լուսանկար)



Լուսանկար 13. «Սոլեյ» ՄՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հյուսիսային հատվածը (օդային լուսանկար)



Լուսանկար 14. «Սոլեյ» ՄՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հյուսիսային հատվածի ժայռային բնական ելքերը (օդային լուսանկար)



Լուսանկար 15. «Սոլել» ՍՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հյուսիսային հատվածի ժայռային բնական ելքերը (օդային լուսանկար)



Լուսանկար 16. «Սոլել» ՍՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հյուսիսային հատվածում՝ ժամանակին իրականացված քարհավաք (օդային լուսանկար)



Լուսանկար 17. «Մոլեյ» ՍՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հարավ-արևելյան հատվածում՝ ժամանակին իրականացված քարհավաք (օդային լուսանկար)



Լուսանկար 18. «Մոլեյ» ՍՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հարավ-արևելյան հատվածում՝ ժամանակին իրականացված քարհավաք (օդային լուսանկար)



Լուսանկար 19. «Սոլեյ» ՄՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հյուսիսային հատվածի սահմանի մոտ պահպանված պատաշարի հատված



Լուսանկար 20. «Սոլեյ» ՄՊԸ-ի կողմից ծրագրի իրականացման համար հայցվող տարածքի հյուսիսային հատվածի սահմանի մոտ պահպանված պատաշարի հատված

Համայնքի ավագանու որոշում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի - I, Հեռ. 090-75-77-87
Էլ. փոստ talinhamaynpeterson@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<30>> ապրիլի 2025 թվական N 66-Ա

**ԴԱՇՏԱԴԵՄ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ՍՈԼԵՑ» ՄՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման 28-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով 2025 թվականի ապրիլի 2-ին Դաշտադեմ և Թալին բնակավայրերում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ անցկացված առաջին հանրային քննարկման արձանագրությունները և հաշվի առնելով «ՍՈԼԵՑ» ՄՊ ընկերության տնօրենի 27.02.2025 թվականի գրությունը.

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

- 1.Տալ նախնական համաձայնություն «ՍՈԼԵՑ» ՄՊ ընկերությանը՝ Դաշտադեմ բնակավայրի վարչական տարածքում արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար:
- 2.Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 21

Դեմ - 0

Ձեռնպահ - 1

- 1.Տավրոս Մափեյան
- 2.Բաբկեն Պողոսյան
- 3.Արման Կարապետյան
- 4.Սարգիս Գրիգորյան
- 5.Գեղամ Ղազարյան
- 6.Մերգե Մկրտչյան
- 7.Մհեր Մարգարյան
- 8.Ավետիս Մինասյան
- 9.Հարություն Կարապետյան

1.Սարգիս Մուրադյան

10. Էմին Մկրտչյան
11. Արմեն Ծառուկյան
12. Նելլի Մարգարյան
13. Գեղամ Սարգսյան
14. Նարեկ Գրիգորյան
15. Կարեն Գրիգորյան
16. Վահե Եղիազարյան
17. Մնացական Մնացականյան
18. Դավիթ Մանուկյան
19. Գագիկ Ավետիսյան
20. Անի Միկոյան
21. Հայկ Սահարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՏԱՎՐՈՍ ՍԱՓԵՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԳԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA, ARAGATSOTN MARZ
MUNICIPALITY OF TALIN**



0501, ք. Թալին, Գալի - 1, Հեռ.՝ 060-75-77-87, էլ. փոստ՝ talinihamaynqapetaran@list.ru
0501, t. Talin, Tel.: 060-75-77-87, E-mail: talinihamaynqapetaran@list.ru

N 1408
02 մայիսի 2025թ.

**«ՍՈՒԵՅ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Սողոմոնյան

Ի պատասխան Ձեր 27.02.2025թ. գրության հայտնում ենք, որ 2025թ. ապրիլի 2-ին, ժամը 12:00-ին ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեմ բնակավայրի վարչական շենքում և 2025թ. ապրիլի 2-ին, ժամը 12:45-ին ՀՀ Արագածոտնի մարզի Թալին բնակավայրի վարչական շենքում կայացել են հանրային լուսններ՝ «ՍՈՒԵՅ» ՍՊԸ-ի կողմից Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Սաիդներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամաս հասցեում նախատեսվող արևային ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների վերաբերյալ:

Հանրային լուսնների արդյունքում համայնքը տալիս է նախնական համաձայնություն տվյալ նախաձեռնությանը:

Կից ներկայացնում են հանրային լուսնների արձանագրությունը, տեսաձայնագրությունը և մասնակիցների ցուցակը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դատարող՝ Զատարաշինության և
հողաշինության բաժնի պետի ժ/պ՝ Գ. Միրզախանյան
Հեռ. 093-92-05-91

Տ. ՍԱՓԵՅԱՆ

Թերթի Հայտարարություն , Արձանագրություններ, մասնակիցների ցանկ, լուսանկարներ;
Դաշտադեմ բնակավայրի քննարկման արձանագրությունը,
մասնակիցների ցանկը, լուսանկարները

Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 060 27 48 04, 060 27 48 05
fax 060 27 48 03
news@aravot.am
www.aravot.am

Արավոտ

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 200 դրամ

032/7260/ 28 փետրվար 2025 ուրբաթ

1094 1829-2224 25032

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին [Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3] Օրենքի եւ «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343 - Ն որոշման հավելվածի համաձայն, 2025թգ ապրիլի 2-ին ժամը 12-ին ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի եւ 12:45-ին Թալին բնակավայրի վարչական ղեկավարների նստավայրերում տեղի կունենա «ՍՈԼԵՅ» ՍՊԸ Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Սաիդներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամասում արեւային ֆոտովոլտային էլեկտրակայանի (տարածքը՝ 7,4 հա, հզորությունը՝ 8000 ԿՎտ) կառուցման հանրային քննարկումը /1-ին հանրային քննարկում/:

Շահագրգիռ հանրության կողմից առաջարկությունները, դիտողությունները եւ կարծիքները կարող են ներկայացվել բանավոր՝ հանրային քննարկման ընթացքում, կամ գրավոր՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Հանրային քննարկումը վարելու է Թալին համայնքի վարչական ղեկավարի տեղակալ՝ Գուրգեն Թադեոսյանը (էլ. հասցե՝ talinihamaynqapetaran@list.ru, հեռ. 093004024):

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

«ՍՈՒԵՑ» ՍՊԸ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտաղեմ Սաիդներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամաս հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման առաջին հանրային քննարկման:

02.04.2025թ.

Թալին համայնք,
Դաշտաղեմ բնակավայր

2025թ. Ապրիլի 2-ին ժամը 12-00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) ՀՀ Օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշմամբ սահմանված կարգով տեղի ունեցավ «ՍՈՒԵՑ» ՍՊԸ Հնկերության կողմից, նախատեսվող, ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտաղեմ Սաիդներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամաս հասցեում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման վերաբերյալ հանրային առաջին քննարկումը:

Քննարկմանը մասնակցում էին Թալին համայնքի ղեկավարի տեղակալը, Դաշտաղեմ բնակավայրի վարչական ղեկավարը, համայնքապետարանի աշխատակիցներ, ձեռնարկողի ներկայացուցիչներ, բնակիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Գուրգեն Թադևոսյանը: Նշեց, որ հանրային քննարկումը վերաբերվում է «Սուլեյ» ՍՊԸ Հնկերության կողմից Թալին համայնքի Դաշտաղեմ Սաիդներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամաս հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցմանը: Ներկայացրեց, որ համայնքը հավանություն է տալիս արևակայանի կառուցմանը, բնակավայրում կստեղծվեն նոր աշխատատեղեր, ձեռնարկողի կողմից կտրամադրվի սոցիալական աջակցություն, ինչը կնպաստի համայնքի զարգացմանը:

«Նովալ» ՍՊԸ ընկերության ներկայացուցիչ Ազգանուշ Դոնոյանը ներկայացրեց, որ հաշվետվությունը կազմվելու է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն: Ներկայացրեց ՇՄԱԳ-ի կարգավորման օրենսդրական դաշտը, հանրային քննարկումների անհրաժեշտությունը: Ներկայացրեց Արևակայանի տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, շրջակա միջավայրի հնարավոր ազդեցությունները: Ներկայացրեց, որ ՇՄԱԳ-ում նախատեսվելու են

Մասնակիցների ցանկ


«ՍՈԼԵՑ» ՍՊԸ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտաղեմ Սաիդներ Դաշտամիջան փողոց թիվ 2 հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման առաջին հանրային քննարկում: / Դաշտաղեմ բնակավայր/

Գ/Գ	Անուն, Ազգանուն	Տեղեկատվություն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Շիրինյան Հովհաննիս	Բնակիչ	077546151	Շիրինյան
2.	Նորայան Վերսիկ	Բնակիչ	093 80 95 10	Նորայան
3.	Նալբանդյան Սթանիսլավ	Բնակիչ	094 935 951	Նալբանդյան
4.	Ասատրյան Գրիգոր	Բնակիչ	094 39 11 35	Ասատրյան
5.	Գալստյան Խաչատրյան	Բնակիչ	093 480 112	Գալստյան
6.	Ասատրյան Նարեկ	Բնակիչ	094-934-954	Ասատրյան
7.	Վեդիկյան Գրիգոր	Բնակիչ	077-26-03-85	Վեդիկյան
8.	Սարգսյան Վահագն	Բնակիչ	093-112-116	Սարգսյան
9.	Սարգսյան Վահագն	Բնակիչ	055 005 665	Սարգսյան
10.	Գալստյան Խաչատրյան	Համայնքի ղեկավար		Գալստյան
11.	Գալստյան Վահագն	Համայնքի ղեկավար	93-92 05 91	Գալստյան
12.	Գալստյան Խաչատրյան	Համայնքի ղեկավար	94-50-58-18	Գալստյան
13.	Գալստյան Խաչատրյան	Համայնքի ղեկավար	093-39-78 60	Գալստյան
14.				
15.				
16.				





**Թալին բնակավայրի քննարկման արձանագրությունը,
մասնակիցների ցանկը, լուսանկարները**



Գազիկ Միրզախանյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության համար և Էզրափանեց հանրային քննարկումը:

Թալին համայնքապետարանի
Ներկայացուցիչ Գազիկ Միրզախանյան

Արձանագրող Գազիկ Միրզախանյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ Գևորգ Աղաբեկյան



[Signature]

[Signature]

[Signature]


Մասնակիցների ցանկ

«ՍՈՒԵՑ» ՍՊԸ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտաղեմ Սաիդներ Դաշտամիջյան փողոց թիվ 2 հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման առաջին հանրային քննարկում: / Թալին բնակավայր/

Գ/Գ	Անուն, Ազգանուն	Տեղեկատվություն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Կրկն Մարգարյան	համայնքապետարանի ներկայացուցիչ	084-00-10-46	<i>[Signature]</i>
2.	Մարգարյան Սեդրիկ	համայնքապետարանի ներկայացուցիչ	093-390-711	<i>[Signature]</i>
3.	Մարգարյան Բարսեղյան	համայնքապետարանի ներկայացուցիչ	094-51-75-76	<i>[Signature]</i>
4.	Սահակյան Կարենյան	ՀԿՏԶ աղ. Սահակյան	093-01-04-99	<i>[Signature]</i>
5.	Մարտիկ Մարգարյան	Թալին համայնքապետարանի ներկայացուցիչ	093-88-86-18	<i>[Signature]</i>
6.	Մարտիկ Սարգսյան	Թալին համայնքապետարանի ներկայացուցիչ	094-82-62-58	<i>[Signature]</i>
7.	Մարտիկ Մարգարյան	Թալին համայնքապետարանի ներկայացուցիչ	077-001854	<i>[Signature]</i>
8.	Մարտիկ Մարգարյան	Թալին համայնքապետարանի ներկայացուցիչ	077-081821	<i>[Signature]</i>
9.	Մարտիկ Մարգարյան	Թալին համայնքապետարանի ներկայացուցիչ	094-303529	<i>[Signature]</i>
10.	Մարտիկ Մարգարյան	Գ. Մարտիկ Մարտիկ համայնքապետարանի ներկայացուցիչ	099-37-99-77	<i>[Signature]</i>
11.	Մարտիկ Մարգարյան	Գ. Մարտիկ Մարտիկ համայնքապետարանի ներկայացուցիչ	094-68-07-36	<i>[Signature]</i>
12.	Մարտիկ Մարգարյան	Թալին համայնքապետարանի ներկայացուցիչ	094-57-02-11	<i>[Signature]</i>
13.	Մարտիկ Մարգարյան	Թալին համայնքապետարանի ներկայացուցիչ	093-05-35-22	<i>[Signature]</i>
14.	Մարտիկ Մարգարյան	Թալին համայնքապետարանի ներկայացուցիչ	098-54-12-54	<i>[Signature]</i>
15.	Մարտիկ Մարգարյան	Թալին համայնքապետարանի ներկայացուցիչ	098-15-25-39	<i>[Signature]</i>
16.	Մարտիկ Մարգարյան	Թալին համայնքապետարանի ներկայացուցիչ	077-79-21-74	<i>[Signature]</i>

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Տեղեկատվություն	Հեռախոսահամար	Ստորագրություն
18.	Արմենյան Երվանդ	համայնքապետի տեղակալ	093 174-200	Արմենյան
19.	Խաչատրյան Տիգրան	համայնքապետարանի տեղակալ	094 12-83-81	Խաչատրյան
20.	Գալստյան Անդրանիկ	համայնքապետարանի տեղակալ	087-06-49-87	Անուշ
21.	Վարդանիշ Զեփարյան	Բնակիչ	093 74 94 55	Վարդանիշ
22.	Սարգսյան Զույգ	համայնքապետի տեղակալ	094 268223	Սարգսյան
23.	Գրիգորյան Մարգարիտ	քաղ. կառ. բաժնի պետ ՏԻԿ	93-92-0591	Գրիգորյան
24.	Փարզ Անգելյան	Վճարային ԿԵՆ Զեփարյան Կ.Պ.Փ.	093-772-776	Փարզ
25.	Սիմոնյան Գրգորյան	Համայնքի Վճարային ԿԵՆ	093 39 7760	Սիմոնյան
26.				
27.				





Հավելված 9.
Համայնքի տեղեկանքը աղբահանության վերաբերյալ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA, ARAGATSOTN MARZ
MUNICIPALITY OF TALIN



0501, ք. Թալին, Գալի - 1, Հեռ.՝ 060-75-77-87, էլ. փոստ՝ talinihamaynpetaran@list.ru
0501, t. Talin, Tel.: 060-75-77-87, E-mail: talinihamaynpetaran@list.ru

N 2511

14 օգոստոսի 2025թ.

«ՇԱՐՈՍՈՒԼԱՐ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ֆ. ՇԱՐՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Շարոյան

Ի պատասխան Ձեր 2025 թվականի օգոստոսի 13-ի դիմումի հայտնում ենք, որ ավելորդ բնահողի և շինարարի տեղափոխման համար նախատեսվում է տարածք տրամադրել Դաշտադեմ բնակավայրում գտնվող 02-035-0117-0039 կադաստրային ծածկագրով հողամասից, որի հեռավորությունը Դաշտադեմ բնակավայրի «ՍՈՒԵՅ» ՍՊԸ-ին պատկանող Սաիդներ դաշտամիջան փողոց 2 հողամասից կազմում է մոտ 600 մետր, տեղափոխման ժամանակ ճշգրիտ վայրը անհրաժեշտ է հստակեցնել Դաշտադեմ բնակավայրի վարչական ղեկավար Ա. Մարտիրոսյանի հետ (հեռ. 055-00-56-65):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ շինարարական աշխատանքները ավարտելուց հետո նշված տարածքը անհրաժեշտ է բարեկարգել և հարթեցնել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Տ. ՍԱՓԵՅԱՆ

Կադարող՝ քաղաքաշինության և
հողաշինության բաժնի պետ՝ Գագիկ Միրզախանյան
Հեռ.՝ 093-92-05-91



Մթնոլորտային օդի հաշվարկներ

Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու արտանետումներ: Դրանք առաջանում են փորման-բեռնման աշխատանքների արդյունքում՝ հիմնականում հորատող, հարթեցնող և ինքնաթափ մեքենաների: Փորման-բեռնման աշխատանքները իրականացվում՝

4 ամիս x 26 օր/ամիս x 8 ժամ/օր = 832 ժամ:

Հաշվարկները կատարված են համաձայն “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987 մեթոդակարգի հետևյալ բանաձևի.

$Q_{\text{Ф.Б.}} = (P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times G \times P6 \times B) \times 10^6 / 3600$ տ/ժամ, որտեղ (նշված մեթոդակարգի աղյուսակ 1):

P1 – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, ընդունվում է 0.05

P2 – 0-50 մ/կմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P3 – գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0,

P4 – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4¹

P5 – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 – գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

G – հանվող հողային զանգվածը:

Արևային կայանի շինարարության ժամանակ հանվող հողի ծավալը կկազմի՝ 1500մ³, հաշվի առնելով հողային զանգվածների միջին տեսակարար կշիռը՝ 2475տ:

Ժամում հանվող տեղափոխվող գրունտի քանակը կկազմի՝

2475տ : 832 ժամ/շին. ժամանակամիջոց = 2,9 տ/ժամ:

B – գործակից, որը հաշվի է առնում նյութի թափման բարձրությունը, 0.6

$Q_{\text{Ф.Б.}} = 0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.5 \times 2,9 \times 1.0 \times 0.6 \times 10^6 / 3600 = 0.096$ /վրկ, կամ՝

$0,096 \times 3600 \times 832 : 10^6 = 0,28$ տ/շին. ժամանակամիջոց:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործում Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում արտանետումները առաջանում են վառելիքի այրման արդյունքում: Հիմնականում օգտագործվում է դիզելային վառելիք:

Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի² հիման վրա:

²Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Core Inventory of Emissions in Europe” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան”

Հաշվարկը իրականացվում է ըստ ծախսվող վառելիքի քանակի, տվյալ դեպքում դա ներկայացվում է դիզելային վառելիքով:

Ըստ նշված մեթոդակարգի, ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև:

Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO2	CH	ՑՕՄ	CO	N2O	CO23	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Շինարարության ընթացքում շահագործվելու են հորատող, հարթեցնող, ինքնաթափ մեքենաներ: Շինարարական տեխնիկան աշխատելու է շինարարության ընթացքում մոտ 1 ամիս (26 օր, 208 ժամ):

Հաշվի առնելով ստույգ նախագծային տվյալների բացակայությունը, հաշվարկների համար օգտագործվել են փորձագիտական գնահատականների հիման վրա ընդունված ցուցանիշները, ըստ որոնց դիզելավառելիքի քանակները հետևյալն են ընդունվել.

- շինարարական տեխնիկա՝ 0.08 տ/օր, ընդամենը՝ 0.08 տ/օր x 208 օր = 2,08 տ;

Ընդամենը՝ 2,08 տ:

Արտանետումների հաշվարկները ըստ շահագործվող տեխնիկայի տեսակի բերված են աղյուսակ 2-ում:

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

ESO₂ = 2Σksb, որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 2,08 տ/շինժամ

SO₂ = 2 x 2,08 x 0.002 = 0.32 տ/շին. ժամ կամ 0.0083 գ/վրկ:

Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /832ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.01	0,18
CH (ածխաջրածիններ)	0,243	0.001	0.001
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.07	1,26

³ Ածխածնի երկօքսիդը, ըստ ՀՀ օրենսդրության, չի հանդիսանում վնասակար նյութ և ենթակա չէ նորմավորման, համապատասխանաբար հետագա հաշվարկներում հաշվի չի առնվել:

ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.012	0,215
Ծծմբային անհիդրիդ		0,0083	0,32
Փոշու անկազմակերպ արտանետում		0,096	0,28

Հավելված 11.
Վճարման անդորրագիրը

Վճարման հանձնարարական N 8362					
Ամսաթիվ/Ժամ		9 հոկտեմբեր	2025թ.	11:03	Կատարողի ՊԿ
Վճարող «ՍՈՒԵՑ» ՍՊԸ				ԴԵԲԵՏ	
ՏՀՏ Կոդ 11 08255516 ՀՎՀՀ				Գումարը(թվերով)	
Վճարողի Բանկը	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Մայրա-Նովա» մասնաճյուղ	Կոդ 22055	h.N 220551064284000		300,000.00 AMD
Շահառու ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ			ԿՐԵԴԻՏ		
Կոդ			h.N		
Շահառուի Բանկ	ՀՀ կենտրոնական բանկ	Կոդ 10300	900005000196		
Գումարը տատերով՝ Երեք հարյուր հազար Դրամ 00 լումա Նպատակ Շրջակա միջավայրի նախարարության՝ Սուլեյ ՍՊԸ ԱՖԷԿ կառուցման փորձաքննության համար Շահառուին վճարման ամսաթիվ Միջնորդավճար 100 ՀՀ դրամ Կ.Տ. ☐ Հաճախողի ստորագրությունները Ձևակերպված է ACBA-ONLINE համակարգով 09/10/2025 Գործարքի կոդ 191741681 Կատարման ամսաթիվ՝ 09/10/25 eFO 72-03-02/3#3					

